Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
մայիսի 2-ի նիստի N 17
արձանագրային որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2012 թվականի ընթացքում՝ հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 94-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2012 թվականի ծրագիրը”, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչությունն (այսուհետ՝ Տեսչություն) իրականացրել է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տնտեսվարող սուբյեկտների կողմից բյուջեի եկամուտների ձևավորմանն ու ծախսերի (ն/թ ֆինանսական ծրագրեր, գնումների գործընթաց) իրականացմանն ուղղված գործունեության, հաշվապահական հաշվառման վարման և բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմման և ներկայացման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ճշտության ստուգումներ, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատանքների գնահատում: Իրականացված ստուգումներով ընդգրկվել են նաև պետական և պետական մասնակցության ընկերություններում ՀՀ պետական բյուջեից գումարների հատկացման և ծախսման, ինչպես նաև շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման, զուտ շահույթի բաշխման ճշտության հարցերը:

Տեսչության կողմից ստուգումներ և ուսումնասիրություններ են իրականացվել նաև ՀՀ Վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա, որոնք միտված են

եղել բացահայտել տնտեսության առանձին ոլորտներում առկա հիմնախնդիրները և պետական ռեսուրսների օպտիմալ օգտագործման պայմաններում գտնել դրանց լուծման լավագույն ուղիները:

Բացի վերը նշված ծրագրային և հատուկ հանձնարարականներով իրականացված ստուգումներից ՀՀ իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս պահանջով և առաջադրած հարցերի շրջանակներում պետական և մասնավոր կազմակերպություններում իրականացվել են համապատասխան ստուգումներ և տրամադրվել մասնագիտական եզրակացություններ:

Տեսչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվել է “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգ”-ով, ՀՀ կառավարության 2010թ. օգոստոսի 19-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կանոնադրությամբ, << Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 23.02.2012թ. թիվ 207-Ն որոշմամբ :

II. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- ՀՀ Վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 94-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2012 թվականի ծրագրով” հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են թվով 29 ստուգումներ, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության թվով 5 կազմակերպություններում հանդիպակաց ստուգումներ:

- ՀՀ իրավապահ մարմինների 2011թ. և 2012թ. ներկայացված պահանջով հաշվետու ժամանակահատվածում ավարտվել և ամփոփվել են թվով 23 ստուգումներ , իսկ թվով 2 ստուգումներ տարեվերջին գտնվել են ընթացքում:

- ՀՀ Վարչապետի հանձնարարականների հիման վրա իրականացվել են թվով 15 ստուգումներ և թվով 23 ուսումնասիրություններ:

Ընդհանուր առմամբ 2012թվականի ընթացքում Տեսչության կողմից իրականացվել և ամփոփվել են թվով 72 ստուգումներ և թվով 23 ուսումնասիրություններ:

Կից՝ ներկայացվում է 2012 թվականի ընթացքում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ Հաշվետվությունը՝ <<Նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու մասին >> ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1905-Ն որոշմամբ հաստատված ձևաչափով:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել նախորդ ժամանակահատվածում ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման և/կամ վերաձևակերպման ցուցանիշների բարելավման ուղղությամբ, հսկողություն է իրականացվել արձանագրված խախտումների, թերությունների և բացթողումների

վերացման նպատակով համապատասխան մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ:

Արդյունքում, Տեսչության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներով 2008-2012թթ. արձանագրված գումարներից վերականգնվել է 672,391.4 հազ. դրամ և վերաձևակերպվել 450,177.1 հազ. դրամ, ընդամենը՝ 1,122,568.5 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 1-ը):

Վերականգնված գումարից 430,742.7 հազ. դրամը վերականգնվել է ՀՀ պետական բյուջե, 219,528.8 հազ. դրամը պակասեցվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորման ենթակա գումարներից, 22,119.9 հազ. դրամը վերականգնվել է կազմակերպությունների հաշվին: Վերաձևակերպված 450,177.1 հազ. դրամի մի մասն իրենից ներկայացնում է կազմակերպություններում հաշվապահական հաշվառմամբ անհիմն ձևակերպված վնասների կրճատում և պարտքերի ճշգրտում, իսկ մյուս մասը՝ հաշվետվություններում չձևակերպված հիմնական միջոցներ և ապրանքանյութական արժեքներ, որոնք ստուգումների արդյունքներով ձևակերպվել են հաշվապահական հաշվեկշիռներում:

Աղյուսակ 1

ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎ	Վերականգնվել կամ վերաձևակերպվել է				
	Ընդամենը	Վերականգնվել է պետական բյուջե	Պակասեցվել է ֆինանսավորումից	Վերականգնվել է կազմակերպության հաշվին	Հաշվառումով վերաձևակերպվել է
	(հազ. դրամ)				
1	2	3	4	5	6
ԸՆԴԱՄԵՆԸ 2012Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ	1,122,568.5	430,742.7	219,528.8	22,119.9	450,177.1
այդ թվում					
Ընդամենը I եռամսյակ	295,554.3	107,457.1	77,859.9	12,027.0	98,210.3
Ընդամենը II եռամսյակ	344,611.7	89,000.0	123,618.8	1,328.4	130,664.5
Ընդամենը III եռամսյակ	107,473.3	74,708.2	-	10.4	32,754.7
Ընդամենը IV եռամսյակ	374,929.2	159,577.4	18,050.1	8,754.1	188,547.6

Մանրամասնելով, պետք է նշել, որ հսկողության արդյունքների հիման վրա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գումարը պակասեցվել է և կազմակերպությունները 2012թ. ընթացքում չեն ֆինանսավորվել 219.5 մլն դրամի չափով: Բյուջե վերականգնված 430.7 մլն դրամից կանխիկ վերականգնումները կազմել են 368.2 մլն դրամ, աշխատանքներով վերականգնումները՝ 13.1 մլն դրամ, պետական բյուջեի հաշվին հարկային մարմինների գծով գրանցված պարտավորությունները՝ 49.4 մլն դրամ:

2012 թվականի ընթացքում ՀՀ Վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 94-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2012 թվականի ծրագրով” իրականացված թվով 34 ստուգումներով արձանագրվել են 2,606,060.2 հազ.դրամի խախտումներ և թերություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավապահ մարմինների 2011թ. և 2012թ. ներկայացված պահանջով իրականացված և ամփոփված թվով 23 ստուգումներով արձանագրվել են 3,144,643.5 հազ. դրամի խախտումներ և թերություններ:

- Հաշվետու ժամանակահատվածում, բացի վերը նշված աշխատանքներից, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցը մասնակցել է մի շարք պետական և պետական մասնակցությամբ կազմակերպությունների լուծարային հանձնաժողովների աշխատանքներին՝ ընդգրկվելով նշված հանձնաժողովներում որպես ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացնող անդամ:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարային հանձնաժողովների աշխատանքների արդյունքում լուծարվել են թվով 29 կազմակերպություններ, թվով 2 կազմակերպություններում լուծարային հանձնաժողովների գործունեությունը դադարեցվել է ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 12-ի թիվ 252-Ն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, իսկ լուծարային գործընթացում գտնվող թվով 14 կազմակերպություններ ճանաչվել են սնանկ դատարանի կողմից կայացրած համապատասխան որոշումների համաձայն: Բազմաթիվ կազմակերպությունների լուծարային գործընթացները դեռևս ընթանում են:

III. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Ինչպես վերը նշվեց, 2012 թվականի ընթացքում ՀՀ Վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 94-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2012 թվականի ծրագրով” իրականացվել է թվով 29 ստուգում և դրանց հանդիպակաց թվով 5 ստուգում:

Իրականացված ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման կամ վերաձևակերպման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում (առավել մանրամասն՝ կից հավելված 1-ում).

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՔԸ	Արձանագրվել է	Ենթակա է վերականգնման կամ վերաձևակերպման
	հազ.դրամ	
1	*2*	*3*
2012թ. ծրագիր	**2,606,060.2**	**2,162,542.6**

Իրականացված ծրագրային ստուգումներով ընդհանուր առմամբ ընդգրկվել են թվով **3** նախարարություններ (ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ քաղաքաշինության և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություններ), դրանց ենթակայության կազմակերպություններ, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալությունը և "Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ" պետական հիմնարկը : Ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ մարզերում (ՀՀ Արմավիրի, Շիրակի և Արագածոտնի մարզերում)՝ ընդգրկելով թվով 3 մարզպետարաններ , թվով 9 քաղաքային համայնքներ և մարզպետարաններին ենթակա առողջապահական ընկերություններ:

2012թ. ընթացքում թվով 3 գործեր ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազությանը, որից թվով 2-ով արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր և ընթանում է քննություն:

<u>2012թ. ծրագրով նախատեսված ստուգումներից չեն իրականացվել թվով 9-ը: Այսպես.</u>

- Համաձայն ՀՀ Վարչապետի 19.10.2012թ. "Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 94-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" N 1017-Ա որոշման, չեղյալ են ճանաչվել ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2012 թվականի ծրագրով նախատեսված թվով 9

ստուգումներ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում, "Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ" պետական հիմնարկում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում, Նոր Նորքի հարկային տեսչությունում, Արմավիրի տարածքային հարկային տեսչությունում, Արարատյան տարածաշրջանային մաքսատանը, Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում, Գյումրու հարկային տեսչությունում, Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը: Ստուգումները չեղյալ են ճանաչվել հաշվի առնելով այն հանգամանքը,որ հաշվետու տարվա ընթացքում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից վերը նշված մարմիններում ընթացել են վերահսկողական գործընթացներ:

Ծրագրային ստուգումներով բացահայտված խախտումներ և թերություններ,դրանց վերացման գծով Տեսչության կողմից տրված առաջարկներ

Ծրագրային ստուգումների համատեքստում անդրադարձ կատարենք Տեսչության կողմից պետական մարմիններում և/կամ դրանց ենթակայության համակարգերում իրականացված առանձին ստուգումների.

ՀՀ առողջապահության նախարարություն

<<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ (ԱԾԻԳ ՊՀ)

1. Վարկային գումարների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերով և ծավալաթերթ նախահաշիվներով նախատեսված, կատարողական ակտերով ամփոփված և հանձնման-ընդունման արձանագրություններով վճարված շինարարական աշխատանքների տեղազննումներով և հսկիչ չափագրումներով հայտնաբերվել են 20885.8 հազ դրամի փաստացի չկատարված աշխատանքներ:

2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերով և պայմանագրերով նախատեսված և լրացուցիչ կատարված շինաշխատանքների ծավալներով կազմված և հաստատված

կատարողական ակտերի փաստաթղթային ստուգմամբ հայտնաբերվել է 23995.9 հազ դրամի փաստացի չկատարված, սակայն վճարված շինաշխատանքներ:

3. Լրացուցիչ կատարված աշխատանքների համար պատվիրատուի կողմից ընդունված շինաշխատանքների ողջամիտ միավորի գների և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված <<Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման>> կարգի համաձայն հաշվարկված գների համեմատությունից պարզվել է, որ պատվիրատուի կողմից ընդունված ողջամիտ գներով հաշվարկված շինաշխատանքների արժեքները 78973.7 հազ. դրամով գերազանցում են <<Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման>> կարգի համաձայն հաշվարկված գներին, որի արդյունքում նույն գումարի չափով թանկացել են կառուցված օբյեկտների արժեքները:

4. ԱԾԻԳ ՊՀ-ի պահպանման ծախսերի մի շարք ծախսային հոդվածներով, առանց սահմանված կարգով ՊՀ-ի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու, թույլ են տրվել հաստատված նախահաշվի նկատմամբ գերածախսեր (2010թ.-ին՝ 15141.6 հազ. դրամի և 2011թ.-ին՝ 8564.5 հազ. դրամի): Հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և նախատեսվել են պահանջվածից ավելի գումարներ ընդամենը 8104.2 հազ. դրամի չափով:

Առաջարկվել է.

1. Փաստացի չկատարված աշխատանքների ընդհանուր գումարը վերականգնել ՀՀ պետական բյուջե:

2.Թույլ չտալ հաստատված նախագծերով նախատեսված աշխատանքների չհիմնավորված փոփոխություններ, ինչպես նաև լրացուցիչ կատարված շինարարական աշխատանքների անհիմն թանկացումներ: Բացառել ոչ նպատակային ծախսեր կատարելու դեպքերը:

3. <<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ի պահպանման ծախսերը իրականացնել խստորեն ղեկավարվելով հաստատված ծախսերի նախահաշիվներով, բացառել առանձին ծախսային հոդվածների գծով գերածախսեր թույլ տալու դեպքերը: ՊՀ-ի պահպանման ծախսերի նախատեսման ժամանակ առանձին

ծախսային հոդվածներով հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և թույլ չտալ պահանջվածից ավել գումարների նախատեսումներ: Առանձին ծախսային հոդվածներով լրացուցիչ ծախսերի հիմնավորված պահանջ առաջանալու դեպքում, դրանց ֆինանսավորումներն այլ ծախսային հոդվածներով առաջացած տնտեսումների հաշվին կատարել միայն նախապես սահմանված կարգով նախահաշվում փոփոխություններ կատարելուց հետո:

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալություն

1. <<Հիվանդանոցային ծառայություններ>> ծրագրով արձանագրվել է 2012թ. համար բյուջեով ավել գումարների նախատեսման դեպքեր՝ ընդամենը գումարով 1.024.587,4 հազ. դրամի, այդ թվում՝

- թվով ինը ծրագրերով հիվանդներին սնունդ չտրամադրելու պայմաններում, հիվանդի բուժման մեկ օրվա ծախսերում ներառվել է նաև սննդի գումար, որի արդյունքում 2012թ.-ին ավել է նախատեսվել 513273.4 հազ. դրամ,
- մեկ հիվանդի բուժման միջին տևողությունը նախորդ տարվա մեկ հիվանդի փաստացի բուժման միջին տևողության համեմատ ավել նախատեսելու արդյունքում ավել է նախատեսվել 179181.0 հազ. դրամ,
- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի դեպքերի քանակն ու մեկ հիվանդի բուժման փաստացի միջին գինը, որի արդյունքում 2012թ. բյուջեով ավել է նախատեսվել 332133.0 հազ. դրամ:

2. <<Հիվանդանոցային ծառայություններ>> ծրագրով բյուջետային հայտերի հաշվարկման հիմքում ընկած հիմնական ցուցանիշներից համարվող հիվանդության բուժման բարդության գործակիցների հաշվարկման կարգը որևէ իրավական ակտով չի կարգավորվում:

3. <<Արտահիվանդանոցային ծառայություններ>> ծրագրով արձանագրվել է 2012թ. համար բյուջեով ավել գումարների նախատեսման դեպքեր՝ ընդամենը գումարով 438871.5 հազ. դրամի, այդ թվում՝

- <<Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ>> ծրագրով հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի դեպքերի քանակը, որի արդյունքում 2012թ. բյուջեով ավել է նախատեսվել 8060.0 հազ. դրամ,

- <<Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների հետազոտություններ>> ծրագրով հեմոդիալիզի մեկ սեանսի գնի ծախսերի հաշվարկը էականորեն գերազանցում է հեմոդիալիզի մեկ սեանսի փաստացի ծախսերին, որի արդյունքում 2012թ.-ին ավել է նախատեսվել 220192.1 հազ. դրամ,

- <<Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ>> ծրագրով մեկ անձի 7 հաճախումների փոխարեն առանց հիմնավորման 2010-2012թթ. համար նախատեսվել է 11 հաճախում, որի արդյունքում 2012թ.-ին ավել է նախատեսվել 106119.4 հազ. դրամ,

- <<Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ>> ծրագրով 2009թ. հայտի հաշվարկման հիմքում ընդունվել է ոչ թե 18 և բարձր տարիքի կանանց թիվը, այլ 18 և բարձր տարիքի բնակչության (այսինքն ներառյալ արական սեռի անձանց) թիվը՝ 2453 հազ. բնակիչ, որի արդյունքում 2009թ.-ին ավել է նախատեսվել 160200.0 հազ. դրամ,

- <<Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ>> ծրագրով անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքային ապահովման ծառայության գծով ՀՀ պետական բյուջեում նախատեսված գումարների մասով նախորդ տարիներին տնտեսումների պայմաններում շարունակվել է ավել գումարների նախատեսումները, որի արդյունքում 2012թ.-ին ավել է նախատեսվել 104500.0 հազ. դրամ:

Առաջարկվել է.

- Արձանագրված 1463458.9 հազ. դրամը նվազեցնել 2012թ. համապատասխան ծախսային հոդվածների ֆինանսավորման գումարներից:

- ՀՀ պետական բյուջեում <<Հիվանդանոցային ծառայություններ>> ծրագրով գումարների նախատեսման նպատակով ներկայացված բյուջետային հայտերի հաշվարկներում և ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամաններում վերանայել մեկ հիվանդի բուժման մեկ օրվա արժեքը և այն հիվանդությունները որոնց գծով

հիվանդներին սննդի տրամադրումը պարտադիր չէ (և չի հատկացվում), մեկ հիվանդի բուժման գինը նվազեցնել սննդի ծախսերի չափով:

- Ուսումնասիրել առանձին հիվանդությունների գծով մեկ հիվանդի բուժման փաստացի միջին տևողությունները և վերջինիս հիման վրա վերանայել՝ նվազեցնել 2012թ. համար ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության եւ սպասարկման միջինացված գները:

- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման համար ներկայացվող բյուջետային հայտերը հիմնավորել ճշգրիտ հաշվարկներով, թույլ չտալ բյուջետային միջոցների անհիմն պահանջներ ներկայացնելու դեպքեր, ծրագրերով գումարները նախատեսելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի հիվանդների թիվը, մեկ հիվանդի բուժման փաստացի միջին գինը, փաստացի կատարված ծախսերը:

- ՀՀ պետական բյուջեում <<Հիվանդանոցային ծառայություններ>> ծրագրի գծով ներկայացվող բյուջետային հայտերում գումարների հաշվարկման նպատակով մշակել հիվանդության բարդության գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն:

Թվով 5 առողջապահական ընկերություններ (թվով 4 ծրագրերի շրջանակներում) կատարված հանդիպակաց ստուգումներ

(<<Աբովյանի բժշկական կենտրոն>> , <<Աշտարակի բժշկական կենտրոն>>, <<Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն>> , <<Էրեբունի բժշկական կենտրոն>> ՓԲԸ –ներ եւ <<Նատալի - ֆարմ>> ՍՊԸ)

1. 2010-2011թ. ընթացքում խախտվել են պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ և ընկերությունների միջև 2010թ համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների 3-րդ և 4-րդ եւ 2011թ համար կնքված պայմանագրին կից հատուկ պայմանների 1-ին կետերի պահանջները՝ հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և բժշկական պարագաները ընկերությունների

կողմից ապահովվել են մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Նշված խախտման համար կողմերի միջեւ 2010-2011թթ համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմի կիրառման արդյունքում (2010թ փոխհատուցումը կատարվում է սահմանված գնի 80%-ի չափով, իսկ 2011թ փոխհատուցումը՝ սահմանված գնի 95%-ի չափով) 2010-2011թթ համար ՀՀ պետական բյուջեից ավել հատկացված գումարը կազմում է 12133.1 հազ. դրամ:

2. 2010-2011թ. ընթացքում ընկերությունների կողմից առանձին դեպքերում խախտվել են ՀՀ առողջապահության նախարարի 2009թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1991-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչության հիվանդանոցային բուժօգնության տրամադրման չափորոշիչի 15-րդ կետով սահմանված նորմի պահանջները եւ <Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ ծրագրի շրջանակներում բուժված հիվանդների գծով ՀՀ ԱՆ ՊԱԳ ներկայացվող հաշվետվություններում թվով 108 հիվանդության դեպքերով ավել կատարողական է ներկայացվել 2830.6 հազ. դրամի չափով, որը ընդունվել և ֆինանսավորվել է:

3. <Նատալի ֆարմ> ՍՊԸ <Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ> ծրագրի գծով 2010թ 2-րդ կիսամյակի եւ 2011թ ընթացքում երեխաների փաստացի բուժման մարդ օրերի քանակը ավել ներկայացնելու հետեւանքով (հիվանդանոց ընդունման եւ դուրս գրման օրերը առանձին օրեր հաշվարկելու արդյունքում), ՀՀ ԱՆ աշխատակազմի ՊԱԳ ներկայացվող հաշվետվություններում ավել կատարողական է ներկայացրել 1931.6 հազ.դրամի չափով, որը ընդունվել եւ ֆինանսավորվել է:

4. ՀՀ կառավարության 2004թ մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված <Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինասավորման> կարգի 10-րդ կետի պահանջների խախտման արդյունքում <Էրեբունի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի գծով 2010թ <Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ> ծրագրով առկա

գերակատարման գումարը <Անհետաձգելի բուժօգնություն ծառայություններ> ծրագրով տնտեսված միջոցների հաշվին փոխհատուցելու արդյունքում ավել ֆինանսավորում է հատկացվել 15987.7 հազ.դրամի չափով:

5. Նատալի Ֆարմ> ՍՊԸ-ը 2010-2011թթ ընթացքում պետական պատվերի շրջանակներում ցուցաբերվող բուժօգնության ծառայությունները մատուցել է ՀՀ ԱՆ նախարարի կողմից 2009թ ապրիլի 14-ի թիվ 500-Ա եւ 2011թ մայիսի 23-ի թիվ 987-Ա հրամաններով հաստատված չափորոշիչների IV գլխի 38 կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան (ընդհանուր պրոֆիլի բաժանմունքներում), սակայն մատուցված ծառայությունների արժեքի փոխհատուցման համար կիրառվել է նույն չափորոշիչի 38-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ նեղ մասնագիտացված պրոֆիլի բաժանմունքների համար սահմանված գները: Նշված խախտման արդյունքում 2010-2011թթ համար ընկերության կողմից ՀՀ ԱՆ աշխատակազմի ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում կատարողականը ավել է ներկայացվել 17421.5 հազ. դրամի չափով, որը ՊԱԳ կողմից ընդունվել եւ ամբողջությամբ փոխհատուցվել է:

6. Ստուգված ընկերություններից թվով երեքի կողմից (<Աշտարակի ԲԿ>,<Աբովյանի ԲԿ> եւ <Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն> ՓԲԸ-ներ) ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2009թ. N 1991-Ա և 21.12.2010թ. N 2078-Ա հրամաններով հաստատված չափորոշիչների 12-րդ կետի /այլ դրույթներ/ պահանջների խախտման արդյունքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք չունեցող անձանց մատուցված ծառայությունների գումարը ՀՀ ԱՆ աշխատակազմի ՊԱԳ ներկայացվող հաշվետվություններում ներառելու արդյունքում ավել կատարողական է ներկայացվել 1094.7 հազ. դրամի չափով, որը ընդունվել եւ ֆինանսավորվել է:

7. ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների առանձին պահանջների խախտման արդյունքում ավել կատարողական է ներկայացվել 2460.4 հազ. դրամի չափով , որը ընդունվել եւ ֆինանսավորվել է:

8. Ստուգված ընկերությունների կողմից համավճարի գանձման գործընթացի ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2003թ հոկտեմբերի 8-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված <Դրամարկղային գործառնությունների իրականացման> կարգի 4-րդ կետի պահանջները եւ համավճարի տեսքով յուրաքանչյուր հիվանդից գանձված գումարների վերաբերյալ պարտադիր կարգով չեն կազմվել դրամարկղային մուտքի օրդերներ եւ օրդերների աջ մասը (անդորրագիրը) չի տրվել դրամը վճարողին: Համավճարից գոյացող եկամուտների հաշվին կատարված ծախսերի մասով չի վարվել առանձնացված հաշվառում եւ չի ապահովվել համավճարի գումարի առնվազն 50 տոկոսը աշխատանքի վարձատրությանն ուղղելու վերաբերյալ ՀՀ կառավարության 2004թ մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված պահանջները:

9. Թվով 5 առողջապահական հիմնարկներում կատարված ստուգումները հիմք են տալիս եզրակացնելու, որ արտահիվանդանոցային բժշկական օգնության ծավալների հաշվարկման համար հիմք հանդիսացող՝ տվյալ առողջապահական կազմակերպության սպասարկման տարածքում կցագրված (կամ) հավաքագրված բնակչության թվի (մշտապես բնակվող անձանց), առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ գրանցված բնակչության եւ առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ չգրանցված, սակայն ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության սպասարկման տարածքում մշտապես բնակվող անձանց թվի վերաբերյալ լիարժեք բազա չունենալը հնարավորություն չի ընձեռում ճշգրիտ որոշել արտահիվանդանոցային բժշկական օգնության գծով պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների ծավալներն ու ֆինանսավորման ենթակա գումարների մեծությունը:

10. Ստուգված թվով 5 առողջապահական ընկերությունները բնակչությանը մատուցվող վճարովի բժշկական օգնության եւ սպասարկման համար առանձին ծառայությունների գծով գների հաստատման ժամանակ չեն ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ դեկտեմբերի 30-ի թիվ 2170-Ա, ինչպես նաև 2011թ ապրիլի 1-ի թիվ 552-Ա հրամաններով հաստատված չափորոշիչների պահանջներով եւ ընկերությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների գները հաստատելիս հիմք չեն ընդունվել տվյալ ծառայության իրականացման համար անհրաժեշտ իրական ծախսերի մեծությունը:

11. <Աշտարակի բժշկական կենտրոն> եւ <Աբովյանի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի կողմից 2010-2011թթ ընթացքում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտման եւ գնումների ընթացակարգերը չապահովելու արդյունքում համապատասխանաբար 67171.9 հազ. դրամի եւ 25341.3 հազ. դրամի դեղորայք և բժշկական նշանակության պարագաներ ձեռք են բերվել առանց համապատասխան մրցույթ հայտարարելու:

12. Առողջապահական ընկերություններում կատարված ստուգումների արդյունքները վկայում են, որ <Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին> ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ և ընկերությունների միջև կնքված պայմանագրերին կից՝ պարտավորությունների եւ պատասխանատվության վերաբերյալ ծառայության մատուցման պայմաններում կատարողի պատասխանատվության մեղմ նորմեր սահմանելը չի նպաստում ընկերությունների կողմից բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունները ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով նախատեսված ողջ ծավալներով մատուցելու եւ բուժսպասարկման ծառայությունների որակը բարձրացնելու ուղղությամբ նախատեսված միջոցառումների ծրագրի ամբողջական իրականացմանը:

Առաջարկվել է .

- Ապահովել թվով 5 հիվանդանոցներում կատարված հանդիպակաց ստուգումներով արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

- Ուժեղացնել վերահսկողությունը համավճարի գանձումը եւ օգտագործումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու գործընթացի նկատմամբ: Հանձնարարել առողջապահական ընկերություններին համավճարի գանձման եւ օգտագործման ժամանակ ղեկավարվել ՀՀ կառավարության 2003թ հոկտեմբերի 8-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված <Դրամարկղային գործառնությունների իրականացման> կարգի 4-րդ կետի պահանջներով եւ համավճարի տեսքով յուրաքանչյուր հիվանդից գանձված գումարների վերաբերյալ պարտադիր կարգով կազմել

դրամարկղային մուտքի օրդերներ եւ օրդերների աջ մասը (անդորրագիրը) տալ դրամը վճարողին: Համավճարից գոյացող եկամուտների հաշվին կատարված ծախսերի մասով վարել առանձնացված հաշվառում եւ ապահովել համավճարի գումարի առնվազն 50 տոկոսը աշխատանքի վարձատրությանն ուղղելու վերաբերյալ ՀՀ կառավարության 2004թ մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված պահանջի կատարումը:

- Հնարավորին սեղմ ժամկետում ստեղծել ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակի, առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ գրանցված բնակչության եւ առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ չգրանցված, սակայն ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության սպասարկման տարածքում մշտապես բնակվող անձանց թվի վերաբերյալ լիարժեք բազա եւ արտահիվանդանոցային բժշկական օգնության գծով պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների ծավալներն ու ֆինանսավորման ենթակա գումարների մեծությունը որոշել վերջիններիս հիման վրա :

- Հանձնարարել առողջապահական ծառայություններ մատուցող ընկերություններին բնակչությանը մատուցվող վճարովի բժշկական օգնության եւ սպասարկման համար առանձին ծառայությունների գծով գների հաստատման ժամանակ ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2010թ դեկտեմբերի 30-ի թիվ 2170-Ա, ինչպես նաև 2011թ ապրիլի 1-ի թիվ 552-Ա հրամաններով հաստատված չափորոշիչների պահանջներով եւ ընկերությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների գները հաստատել՝ հիմք ընդունելով տվյալ ծառայության իրականացման համար անհրաժեշտ իրական ծախսերի մեծությունը:

- <Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին> ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ և ընկերությունների միջև կնքված պայմանագրերով նախատեսված ծավալները ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջներին համապատասխան մատուցելու եւ բնակչությանը մատուցվող բուժսպասարկման ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով վերանայել պայմանագրերին կից՝ պարտավորությունների եւ

պատասխանատվության վերաբերյալ ծառայության մատուցման պայմաններում կատարողի պատասխանատվության նորմերը եւ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային բժշկական օգնության եւ սպասարկման պայմանների չապահովման դեպքերի համար սահմանել պատասխանատվության առավել խիստ նորմեր: Մասնավորապես հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և բժշկական պարագաները ընկերությունների կողմից ամբողջությամբ չապահովելու դեպքերի համար կողմերի միջեւ կնքված պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմերը (կիրառվում է տույժ տվյալ դեպքի արժեքի 5%-ի չափով) վերանայել եւ սահմանել պատասխանատվության ավելի խիստ նորմեր՝ նմանատիպ խախտման դեպքերի արժեքը ամբողջությամբ չփոխհատուցել:

- Ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման նկատմամբ եւ ընկերությունների կողմից ՀՀ ԱՆ աշխատակազմի ՊԱԳ ներկայացված հաշվետվությունների ընդունման ժամանակ բացառելը առանձին ընկերությունների ընդհանուր պրոֆիլի բաժանմունքներում բուժված հիվանդների բուժման արժեքի փոխհատուցումը նեղ մասնագիտացված պրոֆիլի բաժանմունքների համար սահմանված գների չափով իրականացնելու դեպքերը:

- Առողջապահական ընկերությունների գծով հաստատված առանձին առողջապահական ծրագրերով տնտեսված միջոցները այլ ծրագրերի գծով առկա գերակատարման գումարների ծածկմանը ուղղելու գործընթացի ժամանակ ղեկավարվել ՀՀ կառավարության 2004թ մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված <Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման> կարգի 10-րդ կետի պահանջներով:

- Ընկերության կարքիների համար դեղորայքի եւ բժշկական նշանակության պարագաների ձեռքբերումները իրականացնել բացառապես <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՓԲԸ

1. Ընկերության կողմից 2009-2011թ. և 2012թ. 1-ին եռամսյակի ընթացքում թերապևտիկ, նյարդաբանական, վիրաբուժական, մանկական, սրտաբանական և ինֆեկցիոն բաժանմունքներում հիվանդների բուժման ընթացքում խախտվել են պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ առողջապահության նախարարության և <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ -ի միջև 2009-2010թթ. համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների 3-րդ և 4-րդ եւ 2011-2012թթ. համար կնքված պայմանագրին կից հատուկ պայմանների 1-ին կետերի պահանջները՝ հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և բժշկական պարագաները ընկերության կողմից ապահովվել են մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Նշված խախտման դեպքերի համար պայմանագրով նախատեսված պատասխանատվության նորմի կիրառման արդյունքում ստուգվող ժամանակահատվածում ավել ֆինանսավորում է հատկացվել 3537.9 հազ. դրամի չափով:

2. Ընկերության կողմից 2010-2011թթ. ընթացքում խախտվել է ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության սպասարկման մասին թիվ 318-Ն որոշման պահանջները և թվով 4 դեպքերում պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն է տրամադրվել նույն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված (Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի) ցանկում չընդգրկված անձանց եւ վերջիններիս բուժման արժեքը ներառվել է ընկերության կողմից ՀՀ ԱՆ ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում: Նշված խախտման արդյունքում ավել ֆինանսավորում է հատկացվել 323.3 հազ. դրամի չափով:

3. Ընկերության կողմից խախտվել է ՀՀ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն, ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից) 22-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները՝ 2011թ. համար 29265.8 հազ. դրամի, իսկ 2012թ. համար 32532.9 հազ. դրամի

դեղորայքի մատակարարման պայմանագրեր են կնքվել <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի հետ՝ գնումը բաժանելով առանձին չափաբաժինների:

4. Ընկերության 2010թ. տարեկան ֆինանսական հաշվետվության տվյալների համաձայն (ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ձև 2) 2010թ. տարեկան գործունեության արդյունքներով զուտ վնասը շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո կազմել է 4708.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 2006թ հունիսի 22-ի <50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից իրականացվող որոշ ծախսերի առավելագույն թույլատրելի սահմանաչափերը սահմանելու մասին> թիվ 1238-Ն որոշման պահանջները խախտելու հետեւանքով ընկերությունը 2010թ տարեկան գործունեության արդյունքներով շահութաբաժնի հաշվարկման բազան չի ավելացրել 8617.7 հազ. դրամի չափով, որի արդյունքում 2010թ տարեկան գործունեությունից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը պակաս է հաշվարկվել 1954.8 հազ. դրամի չափով: Լրացուցիչ վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար հաշվարկվել է տույժ 160.2 հազ. դրամի չափով: Ընդամենը 2010թ արդյունքներով լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գծով գումարը կազմում է 2115.0 հազ. դրամ (ներառյալ 160.2 հազ. դրամի տույժի գումարը):

5. ՀՀ կառավարության 2006թ հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշման պահանջները խախտելու հետեւանքով ընկերությունը 2011թ գործունեության արդյունքներով շահութաբաժնի հաշվարկման բազան պակաս է ցույց տվել 3893.8 հազ. դրամի չափով, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը պակաս է հաշվարկել 1946.9 հազ. դրամի չափով:

2010-2011թ արդյունքներով շահութաբաժնի գծով պակաս հաշվարկված գումարը կազմում է 4061.9 հազ. դրամ:

Ընդամենը ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա գումարը կազմում է 6673.6 հազ. դրամ:

6. Ստուգման օրվա դրությամբ հիմնադրի (ընկերության ընդհանուր ժողովի) կամ լիազոր մարմնի կողմից <Բաժնետիրական ընկերությունների մասին> ՀՀ օրենքի 67-րդ

հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետի պահանջներին համապատասխան ընկերության 2011թ տարեկան գործունեության արդյունքներով ստացած զուտ շահույթի բաշխում չի կատարվել՝ շահույթի բաշխման վերաբերյալ համապատասխան որոշում չի կայացվել:

Առաջարկվել է .

- Մարզպետարանում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

- Ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման ուղղությամբ:

Հանձնարարել ընկերությանը.

- ակտով արձանագրված գումարները փոխանցել ՀՀ պետական բյուջե, իսկ 2012թ. 1-ին եռամսյակի հիվանդանոցային բժշկական օգնության մասով արձանագրված գումարի չափով պակասեցնել 2012թ ընթացքում կատարված աշխատանքների ծավալները,

- ապահովել ՀՀ ԱՆ և ընկերության միջև պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրին կից հատուկ պայմանների պահանջների կատարումը,

- ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս խստագույնս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն եւ 2006թ. հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշումների պահանջներով,

- ընկերության կարքիների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումները իրականացնել բացառապես «Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, և քննարկել պատասխանատու անձանց պատասխանավության ենթարկելու հարցը:

ՀՀ Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> ՓԲԸ

1. Ընկերության կողմից հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների գծով 2009-2011թ. և 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում խախտվել են պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ առողջապահության նախարարության և «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2009-2011թթ. համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների 3-րդ և 4-րդ եւ 2011-2012թթ. համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների 1-ին կետերի պահանջները՝ հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և բժշկական պարագաները ընկերության կողմից ապահովվել են մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Նշված խախտման դեպքերի համար պայմանագրով նախատեսված պատասխանատվության նորմի կիրառման արդյունքում ստուգվող ժամանակահատվածում ավել ֆինանսավորում է հատկացվել 3761.3 հազ. դրամի չափով, որից ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 2151.3 հազ. դրամ, իսկ 2012թ ընթացքում կատարված աշխատանքների ծավալից պակասեցման ենթակա գումարը՝ 111.7 հազ. դրամ:

2. Ստուգվող ժամանակահատվածում ընկերության կողմից խախտվել են ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով հաստատված չափորոշիչների պահանջները եւ առանձին դեպքերում արտահիվանդանոցային բուժօգնության ծավալները կատարվել են նախատեսվածից քիչ, որի արդյունքում ստուգվող ժամանակաշրջանում արտահիվանդանոցային բժշկական օգնության մասով ՀՀ պետական բյուջեից ավել ֆինանսավորում է հատկացված 1071.2 հազ. դրամի չափով, որից ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարը կազմում է 1039.5 հազ. դրամ:

3. 2009-2011թթ. ընթացքում ընկերությունը գնումներ կատարելիս չի առաջնորդվել 2009-2010թթ. գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով և ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումները կատարել է առանց համապատասխան գնման ընթացակարգեր կիրառելու:

4. Շահութաբաժինների հաշվարկման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը շահութաբաժնի հաշվարկման ժամանակ ՀՀ կառավարության 2006թ հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշմամբ սահմանված ավելացումները չկատարելու արդյունքում 2009թ շահութաբաժնի հաշվարկման բազան պակաս ցույց տալու

հետեւանքով չի հաշվարկել եւ ՀՀ պետական բյուջե չի վճարել 1154.5 հազ. դրամի շահութաբաժին: Նշված գումարը սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար հաշվարկվել է տույժ 249.8 հազ. դրամի չափով:

Ընդամենը 2009թ տարեկան գործունեության արդյունքներով շահութաբաժնի գծով ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարը կազմում է 1404.3 հազ. դրամ:

5. 2010-2011թ գործունեության արդյունքներով շահութաբաժնի հաշվարկման ժամանակ ՀՀ կառավարության 2006թ հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշմամբ սահմանված ավելացումները չկատարելու արդյունքում պակաս շահութաբաժին հաշվարկելու եւ սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար տույժեր հաշվարկելու արդյունքում ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կազմում է համապատասխանաբար 1773.7 հազ. դրամ եւ 565.0 հազ. դրամ:

Առաջարկվել է .

- Մարզպետարանում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ: Միաժամանակ հաշվի առնելով թույլ տրված խախտումների տարածվածության աստիճանը եւ ստուգվող ժամանակաշրջանում դրանց կրկնվելու հաճախականությունը քննության առնել ընկերության ղեկավար աշխատակիցների նկատմամբ կարգապահական միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության հարցը:

- Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե, իսկ 2012թ. 1-ին կիսամյակի հիվանդանոցային բժշկական օգնության մասով արձանագրված գումարի չափով պակասեցնել 2012թ. ընթացքում կատարված աշխատանքների ծավալները:

- Ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման ուղղությամբ:

- Ապահովել ՀՀ ԱՆ և ընկերության միջև պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրին կից հատուկ պայմանների կատարումը:

- ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս խստագույնս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն եւ 2006թ. հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշումների պահանջներով:

- Ընկերության կարքիների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումները իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, և քննարկել պատասխանատու անձանց պատասխանավության ենթարկելու հարցը:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

- Առանձին ծրագրերով գումարների նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, ինչպես նաև փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր կատարելու արդյունքում դեբիտորական պարտքերի սպասվելիք մնացորդները, որի արդյունքում բյուջեում նախատեսվել են պահանջվելիքից ավել գումարներ:

- <<ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ>> -ից հատկացված գումարների հաշվին շինարարական աշխատանքների կատարողական ակտերում առանձին աշխատանքների արժեքը պայմանագրային գնից ավել հաշվարկվելու արդյունքում ՀՀ պետական բյուջեից ավել գումար է վճարվել 964.3 հազ. դրամ,

- ԱՊՀ անդամ երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հերթական նիստի անցկացման նպատակով փաստացի ծախսերն ավել են հաշվարկվել և վճարվել 105.0 հազ. դրամի չափով, բացի այդ 700.0 հազ. դրամի ծախսեր կատարվել են <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտումներով:

- ՀՀ կառավարության 29.12.05թ թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի խախտման արդյունքում <<Ներքին գործուղումներ>> հոդվածով թույլ է տրվել թվով 14 աշխատակիցների օրապահիկի ավել վճարում գումարով 128.0 հազ. դրամ;

Առաջարկվել է.

1. ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և տարեվերջին սպասվելիք դեբիտորական պարտքերի մնացորդները, թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսման դեպքեր:

Հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և դեբիտորական պարտքերի մնացորդները ապահովել 2012թ ՀՀ պետական բյուջեով <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ապարատի պահպանում>> ծրագրով 3666.4 հազ. դրամի և <<Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից>> ծրագրով՝ 233.5 հազ. դրամի ֆինանսավորումից նվազեցումները:

2. Ապահովել արձանագրված 1197.3 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

3. Սպորտային միջոցառումների անցկացման համար հատկացված բյուջետային միջոցների ծախսագրումներն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի խախտմամբ ծախսագրված 700.0 հազ. դրամի ծախսերը հիմնավորել օրենքի պահանջներին համապատասխան ձևակերպված հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերով կամ այդ գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջե:

<<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ >> ՊՀ

- Հիմնարկի պահպանման ծախսերի նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հիմնարկը գրանցվել է ք. Երևան Սարյան 22 հասցեում, սակայն փաստացի գործում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շենքում՝ Աբովյան 9 հասցեում և <<Էներգետիկ ծառայություններ>> և <<Կոմունալ ծախսեր>> հոդվածներով փաստացի ծախսերի ֆինանսավորումներն իրականացվել են նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվին:

- <<ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և հանդերձանքով ապահովում>> ծրագրով 2012թ-ին ձեռքբերման ենթակա մարզահագուստի ու մարզահանդերձանքի պահանջը հաշվարկելիս և ձեռքբերման պայմանագիրը կնքելիս հաշվի չեն առնվել տարեսկզբին առկա 1771.0 հազ. դրամի պահեստավորված միջոցների մնացորդները, որի ըստ էության պահանջը չլինելու պատճառով՝ ստացման պահից առ ստուգման պահը թողնվել է մատակարար կազմակերպության մոտ ի պահ:

- Հիմնարկը խախտելով ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարի հրամանների պահանջները բաշխման ցուցակներից ավել, առանց համապատասխան թույլտվության, ՀՀ հավաքական թիմերին բաշխել է 1085.5 հազ. դրամի գույք:

- <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթ ծրագրի շրջանակներում ձեռք բերված մարզագույքից 1695.4 հազ. դրամի գույք և մարզագույք պահատվության պայմանագրերով ի պահ է հանձնվել <<Էլիտ-սպորտ>> ՍՊԸ-ին, սակայն անհիմն կարգով դուրս է գրվել և ձևակերպվել ծախսերով:

- <<Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմավարական խաղերի անցկացում>> ծրագով առանց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով հաստատված նախահաշվում փոփոխություններ կատարելու թվով 4 ծախսային հոդվածներով տնտեսված 363.8 հազ. դրամից 327.0 հազ. դրամն ուղղվել է նախահաշվից ավել մասնակիցների ճանապարհածախսերի վճարմանը:

- <<Պետական աջակցություն երիտասարդական ծրագրերի իրականացմանը>> ծրագրի <<Օնլայն>> ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի ուղեցույցի մշակում>>, <<Միավ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների և թմրամոլության տարածման

կանխարգելում>> և <<Մենք հայ ենք, մենք երիտասարդ ենք, մենք ուժեղ ենք>> ենթածրագրերի ծախսերը նախատեսելիս հաշվի չեն առնվել, որ ֆիզիկական անձանց վճարվելիք գումարների դիմաց պետք է հաշվարկել և գործատուի հաշվին կենսաթոշակային ֆոնդին փոխանցել պարտադիր սոց. վճարներ, արդյունքում նշված ծրագրերի գծով թույլ են տրվել չհիմնավորված գերածախսեր՝ ընդամենը գումարով 194.7 հազ. դրամի, որը մնացել է որպես կրեդիտորական պարտք և անհիմն կարգով մարվել (վճարվել) 2012թ-ին ՍԵԾԻԳ-ի ապարատի պահմանման միջոցների հաշվից:

Առաջարկվել է.

1. ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և տարեվերջին սպասվելիք դեբիտորական պարտքերի մնացորդները, թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսման դեպքեր: Բացառել ՍԵԾԻԳ-ի պահպանման ծախսերի նախահաշվով <<Էներգետիկ ծառայություններ>> և <<Կոմունալ ծախսեր>> հոդվածներով գումարների նախատեսման պայմաններում նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվին ֆինանսավորումները:

2. Ստուգումներով արձանագրված գումարները նվազեցնել 2012թ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումից և (կամ) վերականգնել ՀՀ պետական բյուջե:

3. Բացառել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսագրումները: Անհիմն ծախսագրումները հիմնավորել օրենքի պահանջներին համապատասխան ձևակերպված հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերով, կամ այդ գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջե:

4. <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթ ծրագրով դուրս գրված 1506.6 հազ. դրամի մարզագույքը մուտքագրել և ձևակերպել հաշվապահական հաշվառմամբ:

5. Թույլ չտալ միջոցառումների անցկացման ծախսերի նախահաշիվներից առանձին ծախսային հոդվածներով շեղումների դեպքերը: Քննարկել հաստատված

նախահաշիվներից շեղումներով ձեռքբերումներ կատարելու համար պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը:

6. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սպորտային և երիտասարդական միջոցառումների անցկացման ծախսերի նախահաշիվները կազմել հիմնավոր հաշվարկներով, հաշվարկներում հաշվի առնել ֆիզիկական անձանց վճարվելիք գումարների դիմաց գործատուի հաշվին վճարվելիք պարտադիր սոցիալական վճարների ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցներ:

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ (Քոլեջ)

1. «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» բյուջետային ծրագրերով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Քոլեջի միջև 2011թ-ի համար կնքված պայմանագրի պայմանագրային գումարը ավելացվել է 6289.3 *հազ. դրամի* չափով,որը հաշվարկներով չի հիմնավորվում:

2. «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով Քոլեջը չի ապահովել պայմանագրով նախատեսված սաների ուսուցումը և պետական պատվերի պայմանագրերի պայմանների խախտման արդյունքում քոլեջին ավել ֆինանսավորումը կազմել է 538.2 հազ. դրամ:

3. Քոլեջի եկամուտների և ծախսերի նախահաշիվների կազմման ընթացքում առանձին ծախսային հոդվածներով հաշվի չի առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի առավելագույն մակարդակը և տարեսկզբի դեբիտորական պարտքերի մնացորդները, արդյունքում 2012թ. առանձին ծախսային հոդվածներով թույլ են տրվել ավել նախատեսումների փաստեր՝ ընդամենը գումարով 1832.9 հազ. դրամի:

4. Հայտնաբերվել է մրցումների անցկացման կանոնադրությամբ նախատեսված ծախսերի համեմատ ավել վճարումներ՝ 68,9 հազ. դրամ և վերանորոգման աշխատանքների ընթացքում շինանյութերի անհիմն դուրս գրումներ՝ գումարով 870,6 հազ. դրամի:

Առաջարկվել է.

1. Ձեռնարկել միջոցառումներ ստուգմամբ արձանագրված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

2. Առանձին ծախսային հոդվածներով 2012թ. գործունեության արդյունքում տնտեսված միջոցները տարեվերջին որպես ազատ մնացորդ փոխանցել ՀՀ պետական բյուջե:

<<Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն>> ՊՈԱԿ

1. Հայտնաբերվել է ՀՀ Նախագահի 2009թ հունվարի 14-ի <<ՀՀ հավաքական թիմերի կազմում օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ հատկացնելու մասին>> N ՆԿ-1-Ն կարգադրությամբ հաստատված կարգի պահանջների խախտմամբ մեկ դեպքով անվանական թոշակի ավել վճարում՝ գումարով 180.0 հազ. դրամի:

2. <<Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում>> ծրագրի գծով առանց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանի, անհիմն կարգով, թվով 5 մարզական կազմակերպություններին վճարվել են 115.0 հազ. դրամի դրամական պարգևներ:

3. ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին սպորտային միջոցառումների համար 130611.2 հազ. դրամի ձեռքբերումներն իրականացվել են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի խախտմամբ:

4. Սպորտային միջոցառումների իրականացման համար հատկացված բյուջետային միջոցներից 5173.6 *հազ. դրամի* ծախսագրումներն իրականացվել են <<*Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ*՝ առանց հիմնավոր հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի:

5. Առանձին բյուջետային ծրագրերով ՀՀ պետական բյուջեից հատկացված դրամական միջոցների չծախսված (տնտեսված) մնացորդները ՀՀ պետական բյուջե չեն վերադարձվել:

6. Միջոցառումների անցկացման ծախսերի նախահաշիվներից առանձին ծախսային հոդվածներով արձանագրվել են շեղումների (գերածախսի և (կամ) թերածախսի) դեպքեր:

Առաջարկվել է .

1. Ձեռնարկել միջոցառումներ ստուգումներով արձանագրված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

2. ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին ձեռքբերումները <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի խախտումով կատարելու համար մեղավոր պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության:

3. Սպորտային միջոցառումների իրականացման համար հատկացված բյուջետային միջոցների ծախսագրումներն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի խախտմամբ ծախսագրված 5173.6 հազ. դրամի ծախսերը հիմնավորել օրենքի պահանջներին համապատասխան ձևակերպված հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերով կամ այդ գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջե:

4. Քննարկել ծախսերի նախահաշիվներից առանձին ծախսային հոդվածներով շեղումների (գերածախսի և (կամ) թերածախսի) դեպքերի համար պատասխանատու անձանց պատժելու հարցը:

«Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

- Արձանագրվել են 2009-2011թթ. տարեվերջյան ազատ դրամական մնացորդները ՀՀ պետական բյուջե չփոխանցելու դեպքեր, մասնավորապես՝ 2009թ-ի տարեվերջյան ազատ դրամական միջոցները կազմել են 28.7 հազ. դրամ, իսկ 2011թ-ին՝ 8.0 հազ. դրամ:
- Առկա են ՊՈԱԿ-ի կողմից առանց ծախսերի նախահաշիվներում համապատասխան փոփոխությունների և առանց նախարարության համաձայնության 2009-2011թթ. ՊՈԱԿ-ի ծախսերի տարեկան նախահաշիվների առանձին հոդվածներով գոյացած տնտեսումներից ավել դրամարկղային ծախսերի կատարման դեպքեր, մասնավորապես՝ 2009թ-ին 391.5 հազ. դրամի չափով, 2010թ-ին 341.4 հազ. դրամի չափով և 2011թ-ին 1538.2 հազ. դրամի չափով:
- Ստուգման ժամանակաշրջանում ՊՈԱԿ-ի կողմից նախարարությանը ներկայացված հաշվետվություններում դեբիտորական պարտքերը պակաս են ներկայացվել:
- ՊՈԱԿ-ի կողմից ընդհանուր գումարով 654.5 հազ. դրամի ծախսերը իրականացվել են «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:
- ՊՈԱԿ-ի կողմից ընդհանուր գումարով 392.2 հազ դրամի ավտոպահեստամասերի և վառելիքի ձեռք բերման ծախսագրումները իրականացվել են օրենսդրության պահանջների խախտմամբ:
- Առկա են ՊՈԱԿ-ի 2012թ. նախահաշվով դեղորայքի ձեռք բերման հոդվածով ավել նախատեսված գումարներ՝ ընդհանուր գումարով 5847.2 հազ. դրամի:
- ՊՈԱԿ-ի կողմից 2009-2011թթ. ընթացքում ՊՈԱԿ-ի կարիքների համար ձեռք բերված ընդհանուր գումարով 70852.3 հազ. դրամի ապրանքների գնումների գործընթացը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

Առաջարկվել է.

- «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

- Ապահովել արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

- ՊՈԱԿ-ի 2012թ. պետական աջակցության տրամադրման պայմանագրային գումարից պակասեցնել աշխատավարձի և դեղորայքի ձեռք բերման հոդվածներով նախատեսված միջոցները 6239.6 հազ. դրամի չափով:

- Այսուհետ նախարարության կողմից հաստատված նախահաշիվներում բացառել հոդվածային շեղումները, անհրաժեշտության դեպքում վերաբաշխումները կատարել սահմանված կարգով և նախարարության համապատասխան համաձայնությունների առկայության դեպքում, իսկ տարեվերջի ազատ դրամական միջոցները փոխանցել ՀՀ պետական բյուջե, թույլ չտալով արհեստական դեբիտորական պարտքերի ձևավորում:

- Այսուհետ ապահովել ՊՈԱԿ-ի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումների իրականացումը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

1. <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագիր.

- Անտեսվել է ՀՀ կառավարության 18.01.2002թ <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված Կարգի պահանջները և <<Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ>> հոդվածով տնտեսված գումարները տարեվերջին ՀՀ պետական բյուջե հետ չեն վերադարձվել: Միաժամանակ խախտելով ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին›› թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության պահանջները՝ առանց ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի առկայության փոխանցված գումարներն ամբողջությամբ ձևակերպվել են փաստացի ծախսերով և ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրած 2011թ. <<Հիմնարկի

կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև2 և <<Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ>> ձև 4 հաշվետվություններից առաջինում 5369.1 հազ. դրամը անհիմն կարգով ձևակերպվել է որպես փաստացի ծախս, իսկ երկրորդում նույն գումարի չափով որպես դեբիտորական պարտք 01.01.2012թ դրությամբ ցույց չի տրվել:

- Առանձին ծախսային հոդվածներով գումարների նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, ինչպես նաև փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր կատարելու արդյունքում դեբիտորական պարտքերի սպասվելիք մնացորդները և նախատեսվել են պահանջվելիքից ավել գումարներ:

2. <<Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում>> և <<Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ>> ծրագրերի գծով 2009-2011թթ նախարարության և <<Աբովյանի էներգետիկական պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի միջև կնքված պետական պատվերի պայմանագրերով նախատեսված պետական պատվերով սովորողների թվի համեմատ ՊՈԱԿ-ում փաստացի սովորողների թիվը պակաս է եղել 2009թ-ին՝ 8, 2010թ-ին՝ 2 և 2011թ.-ին՝ 3 սովորողներով, արդյունքում՝ ՀՀ պետական բյուջեից <<Ուսանողական նպաստի տրամադրում>> ծրագրով ավել է ֆինանսավորվել ընդամենը 782.7 հազ. դրամ:

3. <<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ>> ծրագրով <<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ-ն անտեսել է նախարարության հետ կնքած պայմանագրերի պահանջները և նախարարությանը չի ներկայացրել հաշվետվություն ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև փաստացի ծախսերն իրականացրել է պայմանագրերին կից հավելվածներով հաստատված նախահաշվի շեղումներով:

Ընկերությանը հատկացվելիք գումարի չափը սահմանելու համար նվազագույն շահավետ գինը և սուբսիդիայի գումարները հաշվարկվել են առանց հաշվի առնելու փաստացի ծախսերը, որի արդյունքում թույլ են տրվել ավել գումարների նախատեսման ու հատկացման փաստեր:

4. <<Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն>> ծրագրով բյուջետային ֆինանսավորման հայտերում <<Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ>> հոդվածով 2009-2012թթ համար ավել է նախատեսել 1084.3 հազ. դրամ:

Առաջարկվել է.

- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և տարեվերջին սպասվելիք դեբիտորական պարտքերի մնացորդները, թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսման դեպքեր:
- Ապահովել 2012թ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումից ստուգմամբ արձանագրված 14600.8 հազ. դրամի նվազեցումները:
- Ապահովել ստուգմամբ արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:
- Ղեկավարվել ՀՀ կառավարության 18.01.2002թ. <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված Կարգի պահանջներով և բյուջետային միջոցների չօգտագործված մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին փոխանցել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին:
- Բացառել ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվող <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև 2 և <<Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ>> ձև 4 հաշվետվություններում անարժանահավատ տվյալներ ներառելու փաստերը:
- Բյուջետային ծրագրերի իրականացման վերաբերյալ փաստացի ծախսերը ձևակերպել բացառապես ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու

մասին›› թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության 7-րդ կետի պահանջներին համապատասխան ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի հիման վրա:

- Խիստ հսկողություն սահմանել կազմակերպությունների հետ կնքված աշխատանքների, ծառայությունների մատուցման պայմանագրերի կատարման նկատմամբ:

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

1. <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագրերի առանձին ծախսային հոդվածներով գումարների նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, ինչպես նաև փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր կատարելու արդյունքում դեբիտորական պարտքերի սպասվելիք մնացորդները և նախատեսվել են պահանջվելիքից ավել գումարներ՝ ընդամենը գումարով 13763.9 հազ. դրամի:

2. ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով ներկայացված հայտերում ծառայողական մեքենաների քանակը ներկայացվել են փաստացի քանակից՝ հաշվեկշռում հաշվառվածից ավել, արդյունքում՝ տրանսպորտային միջոցների պահմանման համար <<Տրանսպորտային նյութեր>> և <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում ու պահպանում>> հոդվածներով 2009-2012թթ-ին նախատեսվել են ավել գումարներ, ընդամենը՝ 22263.9 հազ. դրամի, այդ թվում՝ նախարարության աշխատակազմում 12960.0 հազ. դրամի, նախարարի աշխատակազմում 9303.9 հազ. դրամի:

3. Անտեսելով ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին›› թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության պահանջները <<Գործուղման ծախսեր>> հոդվածով 1455.4 հազ. դրամի փաստացի ծախսը 2010թ հաշվապահական հաշվառմամբ չի ձևակերպվել և ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացրած 2010թ <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև 2 և <<Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ>> ձև 4 հաշվետվություններից 1-

ինում 1455.5 հազ. դրամի չափով նվազեցվել է փաստացի ծախսը, իսկ 2-րդում՝ 1455.5 հազ. դրամը որպես կրեդիտորական պարտք 01.01.2011թ դրությամբ ցույց չի տրվել:

4. <ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ>-ի <<Բնակարանային շինարարություն>> ծախսային ծրագրի կազմակերպչական ծախսերի իրականացման համար <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածով գումարների պահանջը ներկայացվել և ՀՀ պետական բյուջեից հատկացվել է իրական պահանջից ավել, իսկ այդ նպատակով չծախսված գումարները, անտեսելով ՀՀ կառավարության 18.01.2002թ <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված Կարգի պահանջները ՀՀ պետական բյուջե չի վերադարձվել: 2009-2011թթ և 2012թ 9 ամիսներին հատկացված գումարից նախատեսված նպատակով չի ծախսվել ընդամենը 2671.8 հազ. դրամի բենզին, իսկ 3030 լիտր բենզինը՝ գումարով 977.9 հազ. դրամ, ծախսվել է ՀՀ քաղաքաշինության նախարարությանն սպասարկող ավտոմեքենաների շահագործման կարիքների համար, կատարելով ոչ նպատակային ծախսեր:

5. <<Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն>> ծրագրով ծախսերի կատարման ընթացքում անտեսվել են ՀՀ կառավարության 10.09.2009թ <<Հայաստանի Հանրապետություն ժամանող պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մասին>> թիվ 1036-Ն որոշման պահանջները և հաստատված նորմաներից ավել ծախս է կատարվել 335.4 հազ. դրամի չափով:

6. ՀՀ կառավարության 20.11.2008թ <<Գյումրի քաղաքի Անի և Մուշ թաղամասերի կառուցապատման աշխատանքների ֆինանսավորման պայմանների մասին>> թիվ 1384-Ա որոշմամբ <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ի հետ կնքված պետության կարիքների համար բնակարանների գնման երեք պայմանագրերով որպես 2009թ և 2010թ վճարման ենթակա կանխավճար <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ին տրամադրված 3900.0 մլն. դրամի փոխանցելի մուրհակները և Գյումրու քաղաքային համայնքի կողմից թիվ ԱՊՁԲ-08/131 գնման պայմանագրով որպես կանխավճար համաֆինանսավորման կարգով վճարված 55.6 մլն. դրամը ՀՀ քաղաքաշինության նախարարությունում հաշվապահական հաշվառմամբ չի ձևակերպվել:

Առաջարկվել է.

- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և տարեվերջին սպասվելիք դեբիտորական պարտքերի մնացորդները, թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսման դեպքեր: ՀՀ պետական բյուջեում <<Տրանսպորտային նյութեր>> և <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում ու պահպանում>> հոդվածներով գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում արտացոլել ավտոմեքենաների թվաքանակի վերաբերյալ իրական տվյալներ՝ բացառելով ավել նախատեսումները:

- Թույլ չտալ փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր կատարելու դեպքեր, որոնք հանգեցնում են տարեվերջին անհիմն պահեստավորված միջոցների գոյացմանը և ՀՀ կառավարության 18.01.2002թ <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան բյուջետային միջոցների տարեվերջյան մնացորդները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

-Բացառել ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին›› թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության պահանջների անտեսման դեպքերը և կատարված փաստացի ծախսերը ձևակերպել հաշվապահական հաշվառմամբ: Բացառել ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվող <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև 2 և <<Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ>> ձև 4 հաշվետվություններում անարժանահավատ տվյալներ ներառելու փաստերը:

-Ապահովել <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագրով 2012թ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումից ստուգմամբ

արձանագրված 13763.9 հազ. դրամի նվազեցումները: Միաժամանակ 2013թ նախահաշվի կատարման ու գնումների իրականացման ընթացքում հաշվի առնել (նվազեցնել) 31.12.2012թ դրությամբ <<Գրասենյակային նյութեր և հագուստ>>, <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածներով պահեստավորված միջոցների մնացորդները և վերլուծելով 2013թ-ի համար անհրաժեշտ ծախսային ուղղությունների պահանջարկը, տարեսկզբին նախահաշվի համապատասխան փոփոխություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

- <<Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն>> ծրագրով ծախսերի կատարման ընթացքում հաշվի առնել ՀՀ կառավարության 10.09.2009թ <<Հայաստանի Հանրապետություն ժամանող պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մասին>> թիվ 1036-Ն որոշմամբ հաստատված ծախսի սահմանաքանակները և թույլ չտալ ավել ծախսերի կատարման դեպքեր:

- ՀՀ քաղաքաշինության նախարարության հաշվապահական հաշվառմամբ և տարեկան հաշվետվություններում արտացոլել ստուգմամբ արձանագրված <<Աղետի գոտու բնակարանային շինարարություն>> ծրագրով <<Գլենդել Հիլզ>> ՓԲԸ-ի հանդեպ դեբիտորական պարտքը, այդ թվում տրամադրված 3900.0 մլն. դրամ փոխանցելի մուրհակները և Գյումրու քաղաքային համայնքի կողմից որպես կանխավճար համաֆինանսավորման կարգով վճարված 55.6 մլն. դրամը:

«Քաղաքաշինության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

1. Օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ժամանակ առանձին դեպքերում հաշվի չեն առնվել մասնագիտացված կազմակերպությունների կողմից ներկայացված գործող շենքերի տեխնիկական վիճակի ու վնասվածության աստիճանի վերաբերյալ եզրակացությունները, իսկ մի շարք դեպքերում անտեսելով ՀՀ կառավարության 09.04.2009թ. թիվ 368-Ն որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ կետի <գ> ենթակետի պահանջները պատվիրատուի կողմից շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ սահմանված կարգով կազմված մասնագիտական եզրակացություններ նախագծողին չի

տրամադրվել (նախագծանախահաշվային փաստաթղթերում բացակայում է դպրոցների շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ նախագծողի կողմից տրված մասնագիտական եզրակացությունը): Արդյունքում հիմնանորոգման (հիմնականում ներքին հարդարման) աշխատանքներն իրականացվել են առանց հաշվի առնելու շենքերի տեխնիկական վիճակը և վնասվածության աստիճանը՝ ձևավորելով շուրջ 334.0 մլն. դրամի բյուջետային միջոցների անարդյունավետ ծախսեր:

2. Նախագծով նախատեսված առանձին աշխատանքներ առաջնահերթ չկատարելու պարագայում արդեն իսկ կատարված աշխատանքների մի մասը (գումարով շուրջ 67.0 մլն դրամ) անարդյունավետ է:

3. Նախագծով և (կամ) նախահաշվով անհիմն նախատեսումներ ու հաշվարկներ կատարելու, ինչպես նաև կատարվող աշխատանքների և դրանց կատարման համար նախատեսված շինարարական նյութերի որակական չափորոշիչները չնշելու արդյունքում նախահաշիվներով նախատեսված բարձր որակի շինարարական աշխատանքների փոխարեն փաստացի կատարվել են ցածր որակի աշխատանքներ, փաստացի կատարվածի համեմատ թույլ է տրվել ավել կատարողականներ հաշվարկելու ու վճարելու դեպքեր՝ ընդամենը 57760.9 հազ. դրամ գումարով: Միաժամանակ նախահաշիվներում թույլ են տրվել անհիմն թանկացումներ՝ 48865.0 հազ. դրամի, որի արդյունքում 1 դեպքով պայմանագրային գինը 4058.1 հազ. դրամով գերազանցել է նախահաշվային գնին:

4. Արձանագրվել են ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված, կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված կամ պակաս կատարված աշխատանքների ծավալներ՝ 46600.7 հազ. դրամի և անորակ կատարված աշխատանքներ՝ 596.3 հազ. դրամի:

5. Կապանի ճարտարագիտական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «Ն.Մ. Օհանյան» ՍՊԸ-ին որպես 100% կանխավճար վճարվել է պայմանագրով նախատեսված 92449.8 հազ դրամը, սակայն փաստացի կատարվել են ընդամենը 24838.4 հազ. դրամի աշխատանքներ: Այսպիսով, նշված պայմանագրով վճարված կանխավճարի դիմաց վերադարձման ենթակա գումարը կազմում է 67611.4 հազ. դրամ (92449.8-24838.4):

6. Մեկ դեպքով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը կնքվել է գնումների մասին գործող ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ (պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 79122.9 հազ. դրամ):

7. Նախագծանախահաշվային փաստաթղթերում փոփոխությունները կատարվել են կամայականորեն՝ խախտելով ՀՀ կառավարության որոշումների պահանջները (փոփոխությունների կատարման վերաբերյալ բացակայում են հիմնավորումները, մասնագիտական եզրակացությունները, խախտվել են ընթացակարգերը), մասնավորապես.

Համաձայն ՀՀ կառավարության 17.12.2009թ. թիվ 1921-Ն որոշման արգելվում է պայմանագրով նախատեսված աշխատանքների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով, որոնք գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի 15%-ը: Պայմանագրի գնի 15%-ի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է մասնագիտական եզրակացություն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը: Իսկ փոխարինումը համարվում է արդյունավետ, եթե դրա հետևանքով պայմանագրով նախատեսված սահմանված ոչ ֆինանսական արդյունքները ստացվում են համեմատաբար քիչ ֆինանսական միջոցների ծախսմամբ: ՀՀ կառավարության 09.04.2009թ. թիվ 368-Ն որոշման համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխությունները պետք է կատարվեն նախագծային փաստաթղթերի կազմման ընթացակարգերի համաձայն:

8. Առանձին դեպքերում չեն կատարվել պայմանագրերի 3.1.2, 6.2 կետերի պահանջները և կապալառու կազմակերպությունների կողմից պայմանագրով և (կամ) պայմանագրին կից օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների խախտումների պայմաններում չեն հաշվարկվել և չեն գանձվել պայմանագրով նախատեսված տույժերը: Միաժամանակ առանձին կապալառու կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով աշխատանքների կատարման ժամկետներն ավարտվել են, սակայն կապալառուների կողմից դեռևս կատարողական ակտեր չեն ներկայացվել:

9. Խախտելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջները ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի Գ. Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման բաց ընթացակարգով մրցույթի բավարար գնահատված

հայտեր ներկայացրած մասնակիցների թվից հաղթող է ճանաչվել ոչ թե նվազագույն գնային առաջարկ ներկայացրած <<Զեթ Պրոֆիլ>> ՍՊԸ-ն՝ 110613.8 հազ. դրամ գնային առաջարկով, այլ <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ն՝ 112015.7 հազ. դրամ գնային առաջարկով: Արդյունքում նշված օբյեկտի հիմնանորոգման աշխատանքների կատարման նպատակով ՀՀ պետական բյուջեից ավել գումար է նախատեսվել և վճարվել 1401.9 հազ. դրամ (112015.7-110613.8) :

10. ԾԻԳ-ի /պատվիրատու/ և <<Հայսեյմշին և ԿՊ ԳՀԻ>> ԲԲԸ-ի /կապալառու/ միջև կնքված 12.05.11թ թիվ ՔՆՔԾԻԳ-ՊԸԱՇՁԲ-11/12 պայմանագրով <<Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ>> ԲԲԸ նախատեսված քանակի համեմատ պակաս է կատարել 66 բնակելի տան հետազոտություններ (նախատեսված 400 բնակելի շենքերի դիմաց կատարել է 361-ը, այդ թվում՝ 2010թ.-ին 87 և 2011թ.274 բնակելի շենքերի ուսումնասիրություններ), արդյունքում ավել է ֆինանսավորվել 1557.2 հազ. դրամ:

Առաջարկվել է.

- Քաղաքաշինական օբյեկտների շինմոնտաժային աշխատանքների իրականացման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ժամանակ ապահովել ՀՀ կառավարության 09.04.2009թ. թիվ 368-Ն որոշման պահանջները և վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող և արդիականացվող օբյեկտների նախագծման առաջադրանքի հետ միասին նախագծողին ներկայացնել օբյեկտի տեխնիկական վիճակի մասին ՀՀ կառավարության 1996թ. հոկտեմբերի 30-ի թիվ 346 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը, ինչպես նաև ինժեներաերկրաբանական հետազննման նյութերը:

- Քաղաքաշինական օբյեկտների շինմոնտաժային աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ժամանակ հաշվի առնել օբյեկտի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և առաջնահերթ իրականացնել օբյեկտի ուժեղացման, ամրացման աշխատանքները, հաշվի առնելով, որ հարդարման և նմանատիպ այլ շինմոնտաժային աշխատանքների կատարումից հետո օբյեկտի

ուժեղացման, ամրացման աշխատանքների իրականացումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի միջոցների փոշիացմանը, իսկ առանձին դեպքերում օբյեկտի փլուզմանը:

- Խիստ հսկողություն սահմանել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, ինչպես նաև դրանց փորձաքննության եզրակացությունների նկատմամբ, մասնավորապես պահանջել, որ նախագծանախահաշվային փաստաթղթերում հստակ նշվեն կատարվող աշխատանքների և դրանց կատարման համար նախատեսված շինարարական նյութերի որակական չափորոշիչները, թույլ չտալ այդ փաստաթղթերում չհիմնավորված շինարարական աշխատանքների ծավալների նախատեսման, անհիմն հաշվարկների դեպքեր, որոնք հետագայում հանգեցնում են ավել կատարողականների ներկայացմանն ու վճարմանը:

- Ապահովել շինարարական աշխատանքների գծով արձանագրված ծավալային հավելագրումների, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում թույլ տված խախտումների ու անորակ աշխատանքների կատարման արդյունքում պետությանը պատճառված վնասի վերականգնումը:

- Խիստ հսկողություն սահմանել նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարվող փոփոխությունների իրականացման գործընթացների վրա, ապահովել դրանց իրականացումը ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերին համաձայն:

- Խիստ հսկողություն սահմանել կապալառու կազմակերպությունների կողմից պայմանագրերով նախատեսված ժամկետներում աշխատանքների կատարումն ապահովելու ուղղությամբ, ապահովել աշխատանքների ժամանակին չկատարման համար հաշվարկված տույժերի գանձումն ու վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

- Գնման ընթացակարգերը կազմակերպել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշման պահանջներին համապատասխան, մասնավորապես ԾԻԳ-ի կողմից կապալառու կազմակերպություններին էլեկտրոնային ձևով տրամադրված հրավերների հիմքերը պահպանել մրցութային փաթեթներում:

- Միջոցներ ձեռնարկել <<Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ>> ԲԲԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված քանակի համեմատ պակաս ծավալով կատարված աշխատանքների արժեքը՝ 1557.2 հազ. դրամը ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

ՀՀ ՄԱՐԶԵՐ

2012թվականի ընթացքում ընթացքում ստուգումներ են իրականացվել ՀՀ Արմավիրի Շիրակի և Արագածոտնի մարզերում: ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2012 թվականի ծրագրով ստուգումների անցկացումը նախատեսված էր մարզպետարաններում, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքային համայնքներում:

ՀՀ Արմավիրի մարզպետարան

- Մարզպետարանի ապարատի պահպանման և մշակութային միջոցառումների կազմակերպման նպատակով կատարված՝ ընդհանուր գումարով 7210.9 հազ. դրամի ծախսերն իրականացվել են «Հաշվապահական Հաշվառման» մասին ՀՀ օրենքի և վերջինիս հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտումներով:
- Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 2644.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2006թ-ի թիվ 1262–ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների խախտմամբ մարզպետարանի կողմից մարզի թվով 3 հանրակրթական ուսումնական հաստատություններում 2010թ. սեպտեմբեր ամսին կատարվել է 3457.9 հազ. դրամի վերաբաշխում (առանց ՀՀ ֆինանսների նախարարի հետ համաձայնեցնելու):
- Թվով 3 սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների (ՍԾՏԳ) կողմից նպաստառուներին ավել է վճարվել 403.5 հազ. դրամի նպաստ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Բացի այս, նշված ՍԾՏԳ-ներում հայտնաբերվել է նաև թվով 114 նպաստառուների գծով խախտումներ, որոնց անապահովության միավորի վերահաշվարկի արդյունքում նպաստառուների անապահովության միավորը նվազել է,

սակայն անապահովության սահմանային միավորի վրա ազդեցություն չի ունեցել՝ պահպանելով նպաստ ստանալու իրավունքը:

- Թվով 12 շինարարական օբյեկտներում արձանագրվել է ծավալաթերթ - նախահաշիվներով ընդգրկված, կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների ծավալ՝ ընդհանուր գումարով 11799.6 հազ. դրամի, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- Առկա են կարկտահարված թվով 13 համայնքներում ոռոգման ջրի վարձի փոխհատուցման գումարների ավել հաշվարկման և վճարման դեպքեր՝ ընդհանուր գումարով 807.5 հազ. դրամի, որը ենթակա է ՀՀ պետական բյուջե վերականգնման:
- Արձանագրվել են թվով 13 համայնքների կողմից ներկայացված հողերի ընդհանուր չափերի (հեկտար) անհամապատասխանություններ ջրօգտագործող ընկերությունների կողմից փոխհատուցման ներկայացված հողերի ընդհանուր չափերի (հեկտար) միջև, որի ընդհանուր տարբերությունը կազմել է 315.29հա:
- Բնակարանային խնդիրների բարելավման նպատակով հատկացված դրամական միջոցների գործընթացը թվով 10 շահառուների մասով իրականացվել է ՀՀ կառավարության 10 դեկտեմբերի 2009 թվականի թիվ 1447-Ն և 17 հունիսի 2010 թվականի N 752-Ա որոշումների պահանջների խախտմամբ:
- Մարզպետարանի կողմից բնակարանային խնդիրները բարելավելու նպատակով հատկացված դրամական միջոցներից թվով 9 շահառուներին վճարված ընդհանուր գումարով 94500.0 հազ. դրամը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով:

Առաջարկվել է.

1.ՀՀ Արմավիրի մարզպետարանում քննարկման առարկա դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Ոչ նպատակային որակավորված 392.8 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

բ) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին 2644.6 հազ. դրամ ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

գ) ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2006թ-ի թիվ 1262–ն որոշման պահանջների կատարումը և այսուհետ, ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական և ուսումնական հաստատությունների ծախսերում վերաբաշխումները կատարել նշված որոշմանը համապատասխան:

դ) ՍԾՏԳ-ների կողմից նպաստառուներին ավել վճարված 403.5 հազ. դրամ գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ե) “Պետական նպաստների մասին” ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 20.03.2008թ.-ի թիվ 255-Ն, 15.01.2009թ.-ի թիվ 39-Ն, 14.01.2010թ. թիվ 32-Ն, 20.01.2011թ.-ի թիվ 17-Ն և 29.12.2011թ.-ի թիվ 1861-Ն որոշումների պահանջների կատարումը և ՍԾՏԳ-ներում հայտնաբերված խախտումների գծով սահմանային միավորի վրա ազդեցություն չունեցող թվով 114 նպաստառուների անապահովության միավորի վերահաշվարկումը:

զ) Ջրի վարձերի փոխհատուցման մասով ավել հաշվարկված և վճարված 807.5 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե: Սեղմ ժամկետում իրականացնել ջրօգտագործողների կողմից փաստացի զբաղեցրած հողատարածքների և ջրի վարձի համար կնքված պայմանագրերով նշված հողատարածքների համադրում և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

է) Մարզպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված 11799.6 հազ. դրամ գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ը) ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումների իրականացումը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

թ) Այսուհետ ՀՀ կառավարության 10 դեկտեմբերի 2009 թվականի թիվ 1447-Ն և 17 հունիսի 2010 թվականի N 752-Ա որոշումներով, ինչպես նաև նմանատիպ այլ որոշումներով բնակարանային խնդիրների լուծման նպատակով կնքվող պայմանագրերը կնքելիս հատուկ

ուշադրություն դարձնել որոշումներով սահմանված պահանջներին և խստագույնս պահպանել այդ պահանջների կատարումը:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի, Վաղարշապատի և Մեծամորի քաղաքային համայնքներ

- Արձանագրվել են համայնքների կողմից դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային տվյալների անճշտություններ, որոնք կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ոչ ճիշտ հաշվարկման փաստերի,
- համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի արդյունքում պակաս գումարներ են գանձվել,
- Վաղարշապատի քաղաքային համայնքում պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ,
- Մեծամորի քաղաքային համայնքում կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ,
- Վաղարշապատի քաղաքային համայնքում առկա են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգի խախտման դեպքեր:

Առաջարկվել է.

1. 2012թ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված 2010թ. գույքահարկի և հողի հարկի գծով պակաս ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:
2. Ձեռնարկել միջոցներ համայնքների բյուջեների հարկային և ոչ հարկային եկամուտների աղբյուրների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:
3. Ապահովել արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական և համայնքային բյուջեներ:
4. Գնումների գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

- Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 18520.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկվող դպրոցների ցանկում Մուղնու հիմնական դպրոցը ներկայացվել է որպես առանձին համայնքի դպրոց, սակայն պետք է ներկայացվեր Աշտարակ քաղաքի դպրոցների ցանկում:
- Թվով 4 սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների (ՍԾՏԳ) կողմից նպաստառու ընտանիքներին ավել է վճարվել 5108.5 հազ. դրամի նպաստ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Բացի այս, նշված ՍԾՏԳ-ներում հայտնաբերվել են նաև թվով 162 նպաստառուների գծով խախտումներ, որոնց անապահովության միավորի վերահաշվարկի արդյունքում նպաստառուների անապահովության միավորը նվազել է, սակայն անապահովության սահմանային միավորի վրա ազդեցություն չի ունեցել ՝ պահպանելով նպաստ ստանալու իրավունքը:

- Էլ. էներգիայի, կապի ծառայությունների, համակարգչային ծառայությունների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման հոդվածների գծով 2012թ. տարեվերջին առաջացել է առնվազն 616.3 հազ. դրամի չծախսված գումար, որը ենթակա է պակասեցման 2013թ բյուջեի նախահաշվից, հաշվի առնելով նաև 01.01.2013թ. դրությամբ դեբիտորական պարտքի գումարը:
- Մարզպետարանի մշակութային միջոցառումների իրականացման նպատակով առանց հիմնավոր փաստաթղթերի առկայության վճարվել է 793.3 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից <<Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթիկ>>-ները լրացվել են մի շարք թերություններով՝ չպահպանելով 27.06.2005թ. ՀՀ կառավարության 1001-Ն որոշման և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման, վճարման>> կարգի 7-րդ կետի պահանջները:
- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հաշվեկշռում հաշվառված թվով 3 ավտոմեքենաների վրա առանց մարզպետարանի համապատասխան կարգադրության (թույլտվության) տեղադրվել են գազաբալոնային համակարգեր, որոնց շահագործման համար վերը նշված ավտոմեքենաներին հատկացվել է 13327 լիտր բենզին:
- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակիցներին վճարված ընդամենը 5031.7 հազ. դրամ գործուղման ծախսերը կատարվել են խախտելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման, վճարման>> կարգի 3-րդ և 7-րդ կետերի պահանջները (վճարված 4307.7 հազ. դրամի գծով չեն արձակվել գործուղման հրամաններ, իսկ 724.0 հազ. դրամ օրապահիկի գումարը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե):
- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից թվով 12 համայնքների հանրակրթական դպրոցներին հատկացված 10950.0 հազ. դրամ գումարները ծառայություններ մատուցելու նպատակով վճարվել են վարորդներին (ֆիզիկական անձանց)՝ առանց դպրոցների

կողմից 10 % եկամտահարկի գումարները պահելու և ՀՀ պետական բյուջե փոխանցելու, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

- Թվով 13 օբյեկտներում կապալառուների կողմից կատարված շինարարական աշխատանքների գծով արձանագրվել են 58052.8 հազ. դրամի աշխատանքների և/կամ ծառայությունների հավելագրումներ, ինչպես նաև թվով 1 օբյեկտում՝ կապալառուի գծով պայմանագրով սահմանված ժամկետի խախտման հետևանքով հաշվարկվել է 250.6 հազ. դրամի տույժի գումար: Ընդամենը արձանագրված 58303.4 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- Վարդենուտի դպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերով չի նախատեսվել շենքի ուժեղացման կամ սեյսմազինվածության ավելացման աշխատանքներ՝ խախտվել է ՀՀՇՆ 1-4.02-99 <<Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում>> հիմնական դրույթների 5-րդ կետի պահանջները:
- Մարզպետարանում իրականացրած աուդիտի արդյունքում արձանագրված 2244.9 հազ. դրամ ավել վճարված գումարների գծով հետ գանձման որոշում չի ընդունվել:
-

Առաջարկվել է.

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քննարկել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ՀՀ օրենքների պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե: Այսուհետ ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկվող դպրոցների ցանկում Մուղնու հիմնական դպրոցը ընդգրկել Աշտարակ համայնքի դպրոցների ցանկում:

բ) ՍԾՏԳ-ների կողմից նպաստառուներին ավել վճարված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

գ) 2013թ. բյուջեի նախահաշվից էլեկտրաէներգիայի, կապի ծառայությունների, համակարգչային ծառայությունների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման հոդվածների գծով ֆինանսավորման ենթակա գումարը նվազեցնել առնվազն 616.3 հազ. դրամի չափով, 2012թ. վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի առկայության դեպքում՝ հաշվի առնելով նաև դեբիտորական պարտքի գումարը:

դ) Մարզպետարանի 2009-2011թթ. և 2012թ. հաշվետու ժամանակահատվածում մշակութային միջոցառումների իրականացման նպատակով <<Ես և Նա>> ՍՊԸ-ին և Ա/Ձ Մկրտիչ Թովմասյանին ավել վճարված 793.3 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ե) 2010-2011թթ. և 2012թ. հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանի աշխատակիցներին ք. Աշտարակից ք. Երևան գործուղման նպատակով անհիմն վճարված 724.0 հազ. դրամ օրապահիկի գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

զ) 2010-2011թթ. և 2012թ. հաշվետու ժամանակահատվածում համայնքների դպրոցների կողմից կնքած տրասնպորտային միջոցների վարձակալության պայմանագրերի համաձայն համայնքի բնակիչներին վճարված 10950.0 հազ. դրամ գումարների նկատմամբ հաշվարկված 10 % եկամտահարկի՝ 1095.0 հազ. դրամի վճարումը ՀՀ պետական բյուջե:

է) Մարզպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված 58303.4 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ը) Մարզպետարանի կողմից աուդիտի իրականացման ընթացքում հանրակրթական դպրոցներում 22 դեպքով արձանագրված, սակայն գանձման չներկայացված 2244.9 հազ. դրամ ավել վճարված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

Ձեռնարկել միջոցներ.

1. Նախագծանախահաշվային փաստաթղթերում ՇՆևԿ-ի III-21-73 աղյուսակ 3-ի պահանջների պահպանման, կատարվող աշխատանքների որակական չափորոշիչների

վերաբերյալ լիարժեք տեղեկատվության տրամադրման՝ մասնավորապես աշխատանքի գնի ճիշտ հիմնավորման ուղղությամբ:

2. ՀՀՇՆ 1-4.02-99 <<Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում>> հիմնական դրույթների պահանջների պահպանման ուղղությամբ: Բացի այդ, լիցենզավորված համապատասխան կազմակերպության կողմից Վարդենուտի դպրոցում իրականացնել սեյսմազինվածության տեխնիկական վիճակի կրկնակի ուսումնասիրություն և ուսումնասիրության արդյունքում կազմված եզրակացությունը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

3. ՀՀ կառավարության 17.12.2009թ. թիվ 1921-Ն որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ գլխի 21-րդ կետի 3-րդ ենթակետի, 09.04.2009թ. թիվ 368-Ն որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ կետի գ) ենթակետի և 1996թ.հոկտեմբերի 30 թիվ 364 որոշմամբ սահմանված կարգի պահանջների պահպանման ուղղությամբ:

4. ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2335-Ն որոշման <<Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման>> կարգի 3-րդ և 7-րդ կետերի պահանջների կատարման ուղղությամբ:

5. <<Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթիկներ>>-ը այսուհետ պատշաճ կերպով և հավաստի տվյալներով լրացման ուղղությամբ:

6. Գազի սարքավորումներով աշխատող ավտոմեքենաների համար սահմանել համապատասխան գազի և բենզինի ծախսի նորմաներ և այսուհետ առաջնորդվել այդ նորմաներով:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, Թալինի և Ապարանի քաղաքային համայնքներ

- Համայնքներում արձանագրվել են դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային

տվյալների անճշտություններ, որոնք կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ոչ ճիշտ հաշվարկման փաստերի,

- համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի արդյունքում պակաս գումարներ են գանձվել,
- Աշտարակ,Թալինի և Ապարան քաղաքային համայնքներում պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր են առկա, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ,
- Ապարան քաղաքային համայնքում պետական բյուջեից համայնքային բյուջե նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր են առկա, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ,
- Թալինի համայնքում արձանագրվել են«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ:

Առաջարկվել է.

1.2012թ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված 2010թ. գույքահարկի և հողի հարկի գծով պակաս ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

2. Ձեռնարկել միջոցներ համայնքների բյուջեների հարկային և ոչ հարկային եկամուտների աղբյուրների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:

3. Ապահովել արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական և համայնքային բյուջեներ:

4.Այսուհետ գնումներն իրականացնել պահպանելով “Գնումների մասին” ՀՀ օրենքի պահանջները:

4.Ձեռնարկել միջոցներ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի պահանջները կատարելու ուղղությամբ:

ՀՀ Շիրակի մարզպետարան

- Մարզպետարանի ապարատի պահպանման և մշակութային միջոցառումների կազմակերպման նպատակով կատարված ոչ նպատակային ծախսերի դեպքեր են արձանագրվել ընդհանուր գումարով 1906.0 հազ. դրամի:
- Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 31342.8 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2006թ-ի թիվ 1262–ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների խախտմամբ մարզպետարանի կողմից մարզի թվով 3 հանրակրթական ուսումնական հաստատություններում 2011թ. սեպտեմբեր ամսին կատարվել է 1422.6 հազ. դրամի վերաբաշխում (առանց ՀՀ ֆինանսների նախարարի հետ համաձայնեցնելու):
- Թվով 5 սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների (ՍԾՏԳ) կողմից նպաստառուներին ավել է վճարվել 4446.5 հազ. դրամի նպաստ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Բացի այդ, նշված ՍԾՏԳ-ներում հայտնաբերվել է նաև թվով 49 նպաստառուների գծով խախտումներ, որոնց անապահովության միավորի վերահաշվարկի արդյունքում նպաստառուների անապահովության միավորը նվազել է, սակայն անապահովության սահմանային միավորի վրա ազդեցություն չի ունեցել ՝ պահպանելով նպաստ ստանալու իրավունքը:
- Թվով 12 շինարարական օբյեկտներում արձանագրվել է ծավալաթերթ - նախահաշիվներով ընդգրկված, կատարողական ակտերով հաշվարկված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների ծավալ՝ ընդհանուր գումարով 13632.7 հազ. դրամի, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

- ՀՀ կառավարության 09.04.2009թ. թիվ 3682 որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ կետի գ) ենթակետի՝ վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող և արդիականացվող օբյեկտների նախագծման առաջադրանքների հետ միասին պատվիրատուն նախագծողին պետք է ներկայացնի օբյեկտի տեխնիկական վիճակի մասին ՀՀ կառավարության 1996թ.հոկտեմբերի 30 թիվ 364 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը, ինչպես նաև ինժեներաերկրաբանական հետազոտման նյութերը: Ուսումնասիրված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերում բացակայում են տեխնիկական վիճակի վերաբերյալ նախագծողի կողմից տրված մասնագիտական եզրակացությունները:
- Բնակարանների ձեռք բերման նպատակով հատկացված գումարի ծախսման ճշտությամբ պարզվեց, որ խախտվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի և շահառուների միջև կնքված անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրերի 3.1 կետի պահանջները, այն է՝ բնակելի տան (բնակարանի) ձեռքբերման ժամկետում՝ աջակցության տրամադրման մասին պայմանագրի կնքման օրվանից 6 ամսվա ընթացքում առանց ժամկետի երկարացման հնարավորության բնակարանները պետք է ձեռք բերվեն և անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կրկնօրինակները ներկայացվեն ՀՀ Շիրակի մարզպետարան, որի արդյունքում թվով 4 շահառուի (բնակելի տան (բնակարանների) ձեռք բերման համար վճարվել է ընդամենը 15504.0 հազ. դրամ:
- ՀՀ Կառավարության 27.05.2010թ. <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին գումար հատկացնելու մասին>> թիվ 645-Ա որոշման հիման վրա Գյումրու Ազատ Շիշյանի անվան <<Օկտետ>> N 6 երաժշտական դպրոցի շինարարությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքին սուբվենցիա հատկացնելու համար ՀՀ Շիրակի մարզպետարանին ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացվել է 10000.0 հազ. դրամ: Գյուրիի քաղաքապետարանի կողմից խախտվել են սուբվենցիայի պայմանագրի 3.1 և 3.2 կետերի պահանջները, այն է՝ մարզպետարանին չեն ներկայացվել ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները և աշխատանքների կատարման մասին վերջնական հաշվետվությունը:

- Էլեկտրաէներգիայի, կապի և կոմունալ ծառայությունների հոդվածներով առկա դեբիտորական պարտքերի և փաստացի կատարված ծախսերի դինամիկայի ուսումնասիրության արդյունքում, նշված հոդվածներով 2013թ. բյուջեի ֆինանսավորման գումարից պակասեցման է առաջադրվել ընդամենը 14300.3 հազ. դրամ:

Առաջարկվել է.

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին (այդ թվում՝ 2011թ. հունվարի 1-ից ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության թվով 7 ավագ դպրոցներին) 31342.8 հազ. դրամ ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

բ) ՄԾՏԳ-ների կողմից նպաստառուներին ավել վճարված 4446.5 հազ. դրամ գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

գ) Ստուգող խմբի կողմից ոչ նպատակային որակավորված 1906.0 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

դ) Մարզպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված 13632.7 հազ. դրամ գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

Ձեռնարկել միջոցներ.

1. ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2006թ-ի թիվ 1262–ն որոշման պահանջների կատարումը ապահովելու ուղղությամբ, ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության

պետական հանրակրթական և ուսումնական հաստատությունների ծախսերում վերաբաշխումները կատարել նշված որոշմանը համապատասխան:

2. “Պետական նպաստների մասին” ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 20.03.2008թ.-ի թիվ 255-Ն, 15.01.2009թ.-ի թիվ 39-Ն, 14.01.2010թ. թիվ 32-Ն, 20.01.2011թ.-ի թիվ 17-Ն և 29.12.2011թ.-ի թիվ 1861-Ն որոշումների պահանջների կատարման ուղղությամբ և վերահաշվարկել ՍԺՏԳ-ներում հայտնաբերված խախտումների գծով սահմանային միավորի վրա ազդեցություն չունեցող թվով 49 նպաստառուների անապահովության միավորը:

3. ՀՀ կառավարության 24 նոյեմբերի ուղղությամբ 2011 թվականի թիվ 1706-Ն որոշումով և հետագայում նմանատիպ այլ որոշումներով բնակարանային խնդիրների լուծման նպատակով կնքված պայմանագրերի, որոշումներով սահմանված պահանջների կատարման ուղղությամբ:

4. Վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող և արդիականացվող օբյեկտների նախագծման առաջադրանքի հետ միասին, այսուհետ առաջնորդվելով ՀՀ կառավարության 09.04.2009թ. թիվ 3682 որոշմամբ՝ ներկայացնել օբյեկտի տեխնիկական վիճակի մասին ՀՀ կառավարության 1996թ. հոկտեմբերի 30-ի թիվ 364 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը:

5. ՀՀ կառավարության 27.05.2010թ. <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին գումար հատկացնելու մասին>> թիվ 645-Ա որոշումով Գյումրու Ազատ Շիշյանի անվան <<Օկտետ>> N 6 երաժշտական դպրոցի շինարարությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, ինչպես նաև հետագայում նմանատիպ այլ որոշումներով աջակցություն ցուցաբերելու նպատակով կնքվող պայմանագրերի և որոշումների պահանջների կատարման ուղղությամբ:

6. էլեկտրաէներգիայի, կապի ծառայությունների, կոմունալ ծառայությունների գծով 2013թ-ին ավել նախատեսված գումարները 2013թ. բյուջեի նախահաշվից պակասեցնելու ուղղությամբ ՝ ելնելով 2013թ-ի ընթացքում նշված հոդվածներով կատարված փաստացի ծախսերի դինամիկայից:

ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի,Գյումրու և Արթիկի քաղաքային համայնքներ

- Մարալիկի, Գյումրու և Արթիկի քաղաքային համայնքների կողմից դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային տվյալների անճշտություններ են արձանագրվել, որոնք կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ոչ ճիշտ հաշվարկման :

- Մարալիկի, Գյումրու և Արթիկի քաղաքային համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի արդյունքում պակաս գումարներ են գանձվել:

-Մարալիկի, Գյումրու և Արթիկի քաղաքային համայնքներում պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր են արձանագրվել, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:

-Գյումրու համայնքում թվով 2 ՄԾՏԳ-ների կողմից նպաստառու ընտանիքներին ավել է վճարվել 8990.6 հազ. դրամի նպաստ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: Բացի այդ, նշված ՄԾՏԳ-ներում հայտնաբերվել է նաև թվով 36 նպաստառուների գծով խախտումներ, որոնց անապահովության միավորի վերահաշվարկի արդյունքում նպաստառուների անապահովության միավորը նվազել է , սակայն անապահովության սահմանային միավորի վրա ազդեցություն չի ունեցել՝ պահպանելով նպաստ ստանալու իրավունքը:

-Գյումրու քաղաքային համայնքին հատկացված 10000.0 հազ. դրամ սուբվենցիայի գումարի ծախսման վերաբերյալ վերջնական հաշվետվությունը մարզպետարանին չի ներկայացվել, ինչի արդյունքում խախտվել են սուբվենցիայի պայմանագրի 3.1 և 3.2 կետերը:

-Ֆրանսիայի Կրետեյ քույր քաղաքի համագործակցության կոմիտեի կողմից Գյումրու քաղաքապետարանի Ն. Տիգրանյանի անվան <<Արվեստի դպրոց>> ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքների համար տրամադրված 4593.5 հազ. դրամ գումարը ծախսվել է ոչ նպատակային:

-«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով Մարալիկի, Գյումրու և Արթիկի քաղաքային համայնքների կողմից իրականացվել են գնումներ:

Առաջարկվել է.

1. 2012թ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված 2010թ. գույքահարկի և հողի հարկի գծով պակաս ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:
2. Ձեռնարկել միջոցներ համայնքների բյուջեների հարկային և ոչ հարկային եկամուտների աղբյուրների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:
3. Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե և համայնքային բյուջեներ վերականգնման ենթակա գումարների վերականգնումը:
4. Ձեռնարկել միջոցներ Գյումրու Ազատ Շիշյանի անվան <<Օկտետ>> N 6 երաժշտական դպրոցի շինարարությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքին հատկացված 10000.0 հազ. դրամ սուբվենցիայի գումարի ծախսման վերաբերյալ վերջնական հաշվետվությունը մարզպետարանին ներկայացնելու ուղղությամբ:

5.Ձեռնարկել միջոցներ համայնքների համապատասխան աշխատանքները «Գնումների մասին», «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքների և այլ օրենքների պահանջներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ:

IV. ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ իրավապահ մարմինների 2012թ. ներկայացված պահանջով իրականացված ստուգումներով արձանագրված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՔԸ	Արձանագրվել է	Ենթակա է վերականգնման կամ

		վերաձևակերպման
	(հազ. դրամ)	
1	2	3
2012թ. պահանջ	3,144,643.5	3,143,771.0

V.ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012թ. ընթացքում Տեսչության կողմից համապատասխան աշխատանքներ են տարվել ՀՀ Վարչապետի կողմից տրված հանձնարարականների պատշաճ կատարման ուղղությամբ: Այսպես.

1.ՀՀ Վարչապետի 22.12.2011թ. թիվ 23.14/(100387)-11 հանձնարարականի հիման վրա “Սթրես կենտրոն”ՓԲԸ-ում իրականացվել է ֆինանսական ստուգում:

2.ՀՀ Վարչապետի 17.01.2012թ. թիվ 02/23.4/370-12 հանձնարարականի հիման վրա “Գալակտիկա” ՓԲԸ-ում իրականացվել է համալիր ֆինանսական ստուգում:

3.ՀՀ Վարչապետի 14.05.2012թ. թիվ 12.4[111522]-12 հանձնարարականի հիման վրա ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի քարտուղարությունում իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

4.ՀՀ Վարչապետի 08.06.2012թ. թիվ 02/23.16/8120-12 հանձնարարականի հիման վրա <<"Նորք" տեղեկատվական վերլուծական կենտրոն>>ՓԲԸ-ում իրականացվել է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հիմնավորվածության և նպատակայնության ստուգում:

5. ՀՀ Վարչապետի 21.07.2012թ. թիվ 02/11.5/10201-12 հանձնարարականի հիման վրա թվով 12 կազմակերպություններում իրականացվել են հաշվապահական ավտոմատացման համակարգի ներդրման և շահագործման աշխատանքների ընթացքի վերաբերյալ ուսումնասիրություններ:

6..ՀՀ Վարչապետի 24.07.2012թ. թիվ 02/23.2/10326-12 հանձնարարականի հիման վրա “Մուսալեռ”, “Նաիրի” , “Աշտարակ” և “Մասիս” ջրօգտագործողների ընկերություններում իրականացվել են համալիր՝ ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակի ստուգումներ:

7. ՀՀ Վարչապետի 03.08.2012թ. թիվ 12.4/[123612]-12 հանձնարարականի հիման վրա ԱՊՀ մասնակից պետությունների տարածքներում կազմակերպված հանցավորության և հանցագործությունների այլ վտանգավոր տեսակների դեմ պայքարը համակարգող բյուրոյում իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգում:

8. ՀՀ Վարչապետի 24.08.2012թ. թիվ 02/11.5/11985-12 հանձնարարականի հիման վրա թվով 11 կազմակերպություններում իրականացվել են հաշվապահական ավտոմատացման համակարգի ներդրման և շահագործման աշխատանքների ընթացքի վերաբերյալ ուսումնասիրություններ:

9. ՀՀ Վարչապետի 04.09.2012թ. թիվ 02/23.11/12393-12 հանձնարարականի հիման վրա ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության համակարգի “Երվերելակ”, “Էկոսերվիս” “Հատուկպայթշին” և “Երառսպասարկում” ՓԲԸ-ներում իրականացվել են 2010-2011թ գործունեության արդյունքներով վնասների առաջացման պատճառների ճշտության ստուգումներ:

10. ՀՀ Վարչապետի 26.10.2012թ. թիվ 12.6/[132541]-12 հանձնարարականի հիման վրա ԱՊՀ անդամ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի գործադիր տնօրինությունում իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

11. ՀՀ Վարչապետի 05.12.2012թ. թիվ 02/23.16/ 17615-12 հանձնարարականի հիման վրա ՀՀ արտաքին գործերի նախարարության "Պետական արարողակարգի ծառայություն" գործակալությունում իրականացվել է գործակալության կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռք բերման “Գնումների մասին”ՀՀ օրենքին համապատասխանության ճշտության ստուգում:

ՀՀ իրավապահ մարմինների պահանջով և ՀՀ Վարչապետի հանձնարարականներով կատարված ստուգումների ամփոփ արդյունքները ներկայացված են կից՝ հավելված 1-ում:

VI. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕԳՏԻՆ ԲՌՆԱԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ԲՌՆԱԳՐԱՎՎԱԾ, ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԶՈՒՐԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՑԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ԴԱՀԿ ծառայություն) կողմից 2012թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձված ընդհանուր գումարը կազմում է 2,761,730.8 հազ. դրամ, այդ թվում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գծով՝ 1,784,408.9 հազ. դրամ, ՀՀ դատախազության հայցերով՝ 42,658.0 հազ. դրամ, ՀՀ ֆինանսների նախարարության հայցերով՝ 4,895.7 հազ. դրամ, այլ բնույթի վարույթներով՝ 36,611.6 հազ. դրամ, պետական տուրքերով , տուգանքներով և գույքի բռնագրավումներով 893,156.6 հազ. դրամ :

ՀՀ կառավարության 18.02.2010թ. “Բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքներն օգտագործելու և դրանք հանձնելու, հաշվառելու և ոչնչացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 4-ի N 494 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” N 146-Ն որոշման համաձայն, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ֆինանսների նախարարություն՝ բռնագրավված, հօգուտ պետության

տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքների (այսուհետ՝ Գույք) իրացման վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է 2012 թվականի ընթացքում ԴԱՀԿ ծառայության կողմից ներկայացված հաշվետվությունների ամփոփ պատկերը:

2012 թվականի ընթացքում ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվել է ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու տարում հարուցված ընդհանուր թվով 109 կատարողական վարույթ՝ տարբեր իրավասության դատարանների / Հարավային քրեական, Մալաթիա-Սեբաստյա, Կենտրոն և Նորք-Մարաշ , Շենգավիթ, Էրեբունի և Նուբարաշեն, Աջափնյակ և Դավթաշենի վարչական շրջանների , Արարատի, Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի,Կոտայքի, Վայոց Ձորի, Շիրակի մարզերի / կողմից կայացված դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերով: Ընդ որում, բռնագրավվել, հօգուտ պետության տիրազուրկ է ճանաչվել և/կամ ժառանգության իրավունքով պետությանն է անցել ամենատարբեր գույք, այդ թվում՝ հագուստ, փոխադրամիջոցներ, հարդարման պարագաներ, տնտեսական ապրանքներ, բջջային հեռախոսներ, փայտանյութ, կենցաղային տեխնիկա, սննդամթերք, կահույք, դեղորայք, զենք, զինամթերք , ոսկի, թանկարժեք քարեր, բենզին,սրբապատկերներ,ծխախոտ և այլն:

Իրականացված ընդհանուր թվով 109 կատարողական վարույթներից հաշվետու տարում ավարտվել է թվով 76-ը, որից թվով 35 կատարողական վարույթով Գույքը վաճառվել է և իրացումից ստացված հասույթը փոխանցվել է պետական բյուջե,

- թվով 1 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ‘ԴԱՀԿ մասին’ ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,այն է վերաքննիչ բողոքի պատճառով կատարողական թերթիկը հետ է վերադարձվել,
- թվով 3 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ‘ԴԱՀԿ մասին’ ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ կետի, նկատի ունենալով, որ ապրանքները ժամկետանց են և իրացման համար ոչ պիտանի,

- թվով 1 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ՝ԴԱՀԿ մասին՝ ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,այն է՝ ապրանքը ենթակա չէ հետագա օգտագործման,
- թվով 2 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ՝ԴԱՀԿ մասին՝ ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ կետի, այն է՝ հիվանդության հետևանքով մանր եղջերավոր անասունները սատկել են և ապրանքը ենթակա է ոչնչացման,

- թվով 2 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ՝ԴԱՀԿ մասին՝ ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, այն է՝ իրեղեն ապացույցը ոչնչացվել է,
- թվով 32 կատարողական վարույթ կարճվել է Գույքը համապատասխան մարմիններին / ՀՀ ոստիկանություն, Մատենադարան,ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն/ հանձնելու հիմքով:

2012 թվականի ընթացքում իրականացված վերը նշված կատարողական վարույթների արդյունքում հաշվետու տարվա վերջում պետությանն անցած գույքի մնացորդի ընդհանուր արժեքը կազմել է 43,934.4 հազ. դրամ, կատարողական գործողությունների ծախսերը՝ 949.2 հազ. դրամ, պետական բյուջե փաստացի փոխանցված գումարը՝ 27,128.4 հազ. դրամ:

2012 թվականի արդյունքներն ամփոփելով, նշենք, որ բյուջեի կատարման հսկողության ընթացքում Տեսչության կողմից բացահայտված ռիսկերը հիմնականում ձևավորվել են վերահսկվող մարմիններում կառավարման անարդյունավետ մակարդակի հետևանքով:

Խախտումների և թերությունների վերացմանն ու ռիսկերի հետագա զսպմանն ուղղված համապատասխան առաջարկություններով յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո ստուգված կազմակերպություն և/կամ պատկան վերադաս մարմին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրություններ են հասցեագրվել և հսկողություն է իրականացվել վերջիններիս կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ:

Պատասխանատու մարմինների կողմից խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ պարբերաբար ստացվող տեղեկատվության համաձայն՝ համապատասխան պաշտոնատար անձանց տրվել են հանձնարարականներ, առանձին դեպքերում խախտում թույլ տված անձինք ենթարկվել են պատասխանատվության, արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթերը: